Российско–Армянский (Славянский) университет

Печатается по решению
Ученого Совета РАУ

Вестник РАУ

(серия: гуманитарные и общественные науки)

(9)

Издательство РАУ

N 1/2010

ОГЛАВЛЕНИЕ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Թումանյան Վ. Ս.

Հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերը պարզաբանելու համար անհրաժեշտ է դրանք քննել քաղաքական համակարգի էության, հատկանիշների, զանազան մոդելների համեմատական–քննական վերլուծությունների միջոցով, ցույց տալ, որ քաղաքական համակարգի կայացումը, ինստիտուտների կազմավորումը, դրանց կարգավիճակի սահմանումը, գործառնությունների և փոխհարաբերությունների կարգավորումը բոլոր օղակներում միշտ իրականացվում են իրավական և սոցիալական զանազան նորմերի հիմքով:

Քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ քաղաքագիտական գրականության մեջ անբավարար ուշադրություն է դարձվում այդ, հիրավի, արդիական ու հրատապ խնդրի վրա: Առանձին հետազոտություններում եթե անգամ հպանցիկ ակնարկվում է քաղաքական համակարգի գործառնությունների նորմատիվ կարգավորումների մասին, ապա միայն ընդհանուր գծերով, այն էլ բացառապես իրավական կարգավորումը նկատի ունենալով: Բնական է՝ նման դեպքերում մոտեցումը հիմնականում կրում է վերացական բնույթ:

Քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի ուսումնասիրությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ քաղաքական համակարգի դիտարկումները և քննարկումները, որպես կանոն, հանգեցվում են պետության ինստիտուտների և զանազան կառույցների քննարկման: Ավելին՝ քաղաքական համակարգերի տիպաբանական վերլուծությունների օբյեկտ են դարձվում հիմնականում պետությունը և մասամբ քաղաքական կուսակցությունները: Մինչդեռ քաղաքական համակարգի կայացման ու գործառնությունների բազմաշերտ ու բազմազան նորմատիվ հիմքերի վերաբերյալ հարցերը, որպես կանոն, անհրաժեշտ ուշադրության առարկա չեն դարձվում:

Գոյություն ունի մեկ այլ հանգամանք ևս, որը, թերևս, անուղղակիորեն, պատճառ է հանդիսանում քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի հարցը ուսումնասիրության հատուկ օբյեկտ չդարձնելու համար: Բանն այն է, որ քաղաքագետների, փիլիսոփաների, սոցիոլոգների, պատմաբանների հետազոտության ոլորտում անհրաժեշտ չափով ուշադրության առարկա չդարձվելը, թերևս, արդարացվում է այն հիմքով, որ դա իրավաբանական հետազոտության ոլորտ է: Գուցե դրա հետ կապված պատճառներից է նաև այն, որ քաղաքական համակարգի հետազոտման հարցերով զբաղվող շատ քաղաքագետներ վախվորած են մոտենում հասարակական–քաղաքական կյանքի նորմա-

տիվ և մասնավորապես իրավական կարգավորման հարցերին` դրանք համարելով խիստ մասնագիտական հետաքրքրությունների առարկա: Իսկ ովքեր էլ ձգտում են լրացնելու այդ տեսանկյունով քաղաքական համակարգի հետազոտության ոլորտում եղած բացը, սահմանափակվում են իրավունքի մասին հիշատակելով: Այդ իսկ պատճառով քաղաքական համակարգի կայացման, դրա բաղադրատարրերի ինստիտուտացման, գործունեության ու փոխհարաբերությունների նորմատիվ կարգավորման, մասնավորապես այդ գործընթացներում իրավունքի և սոցիալական այլ նորմերի առնչությունների վերաբերյալ հարցերը անհրաժեշտ չափով չեն պարզաբանվում:

Ինչ վերաբերում է իրավագետներին, ապա նրանք, հասարակական–քաղաքական կյանքի իրավական կարգավորման հարցերի հետազոտությունը կարևորելով հանդերձ, քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի, մասնավորապես իրավական և ոչ իրավական սոցիալական նորմերի առնչությունների, քաղաքական համակարգի կայացման ու գործառույթների ոլորտում ունեցած դերի ու նշանակության պարզաբանման հարցերով առանձնապես չեն հետաքրքրվում: Իսկ եթե պետության և իրավունքի հիմնահարցերն ուսումնասիրելիս քաղաքական համակարգի գործառույթների նորմատիվ կարգավորման հարցերը, այսպես թե այնպես, դրվում են օրակարգի, ապա հետազոտողները, որպես կանոն, սահմանափակվում են պետության ձեռնարկումների, պետական իշխանության տարբեր ճյուղերի կազմավորման ու գործունեության հարցերի քննարկման և իրավաբանական փաստարկներով արժևորելու շրջանակներով:

Սակայն չենք կարող չնկատել այն փաստը, որ հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի վերաբերյալ առկա պարզաբանումները կրում են ընդհանուր բնույթ. քաղաքական, կրոնական, բարոյական, կանոնադրական նորմերի առնչությունները քննարկվում են իրավագիտության դիրքերից և, բնական է, խորությամբ չեն դիտարկվում քաղաքական համակարգի բազմազան հարաբերությունների և գործընթացների ոչ միայն իրավագիտական, այլև քաղաքական և կորպորատիվ այլ նորմերով կարգավորման առանձնահատկությունները:

Հասարակության քաղաքական համակարգը բարդ ու բազմաշերտ երևույթ է, բովանդակում է բազմազան ու բազմադեմ հարաբերություններ ու գործընթացներ: Դրա ճանաչման և իրական, համընդգրկուն պատկերի ստեղծումը կապված է ոչ միայն իմացաբանական, այլև մեթոդաբանական բնույթի հիմնախնդիրների լուծման հետ:

Ինչպիսի տեսանկյուններով էլ դիտարկելու լինենք հասարակության քաղաքական համակարգը, ինչպիսին էլ լինեն իրավագիտական, քաղաքագիտական, փիլիսոփայական, սոցիոլոգիական, տնտեսագիտական և այլ տեսանկյուններով մոտեցումները, ինչպիսի կոնկրետ նպատակներ էլ հետապնդելիս լինեն հետազոտողները, դրանք միշտ էլ, այսպես թե այնպես, առնչվում են քաղաքական համակարգի կայացման, ինստիտուտների կազմավորման, դրանց կարգավիճակի սահմանման, գործունեության ու փոխհարաբերությունների քննական վերլուծությունների հետ: Այնպես որ, բոլոր դեպքերում, հասարակության քաղաքական համակարգի կայացման, կառուցվածքային տարրերի կազմավորման ու գործունեության ուսումնասիրմանը միտված ձեռնարկումներում առաջ են գալիս դրանց նորմատիվ կարգավորման օրինաչափությունների պարզաբանման խնդիրներ: Ահա այդպիսի կենսական նշանակություն ունեցող խնդիրներից է հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի քաղաքագիտական ուսումնասիրությունը:

Հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի լուսաբանման բարդությունը պայմանավորված է ոչ միայն քաղաքական համակարգի բարդությամբ, բազմաշերտ ու բազմազան լինելու հանգամանքներով, այլև նրանով, որ քաղաքական կյանքի նորմատիվ կարգավորման համակարգը նույնպես բազմաշերտ է: Հասարակական–քաղաքական հարաբերությունները կարգավորվում են ոչ միայն իրավական, այլև

քաղաքական, կրոնական, կանոնադրական, բարոյական և կորպորատիվ այլ նորմերի միջոցով, ինչպես նաև համընդհանուր ճանաչում գտած ավանդույթներով ու սովորույթներով: Եթե նկատի ունենանք նաև այն իրողությունը, որ քաղաքական համակարգի ինստիտուտների կազմավորումը, գործունեությունն ու փոխհարաբերությունները կարգավորվում են քաղաքական ու ոչ քաղաքական, պետական ու ոչ պետական հաստատությունների և կառույցների կողմից՝ տարբեր խումբ նորմերի միջոցով, տարբեր սկզբունքներով ու եղանակներով, ապա դժվար չէ համոզվել, որ հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի պարզաբանումն ու տիպաբանական վերլուծությունն ունեն որոշակի գիտական նշանակություն:

Հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի պարզաբանման համար նախ պետք է հստակ պատկերացում ունենանք քաղաքական համակարգի մասին: Տվյալ դեպքում քաղաքական համակարգի համակողմանի հետազոտումը դուրս է դրա նորմատիվ հիմքերի պարզաբանման նպատակների ոլորտից: Ահա թե ինչու անհրաժեշտ եմ համարում սահմանափակվել քաղաքական համակարգի այն կողմերի ու բաղադրատարրերի հետ կապված հարցերի պարզաբանման շրջանակով, որոնք անմիջականորեն դառնում են նորմատիվ կարգավորման օբյեկտներ: Այդ նպատակով ուշադրություն դարձնենք հասարակության քաղաքական համակարգի առավել նշանակալի բնորոշումների վրա:

Հասարակագիտական գրականության մեջ կան քաղաքական համակարգի բազում և տարաբնույթ սահմանումներ: Այդպիսի տարըմբռնումներն ու բազմաչափությունը պայմանավորված են քաղաքական համակարգի բարդությամբ, բազմակողմանիությամբ և բազմաարժեքականությամբ: Հետազոտողները կիրառում են տարբեր մոտեցումներ, ձգտում են վերլուծել, իմաստավորել և իրենց համոզմունքների և քաղաքական կողմնորոշումների դիրքերից գնահատել քաղաքական համակարգն իր բազմազան դրսևորումներով:

Քաղաքական համակարգի սահմանումներում, որպես կանոն, կիրառվում են ծագումնաբանական, գոյաբանական, մարդաբանական, սոցիոլոգիական, համակարգային, ինստիտուտային, արժեքային, կառուցվածքային, գործառութային, վարքաբանական, գործնական–կիրառական նշանակության և այլ մոտեցումներ ու եղանակներ:

Դիտարկելով քաղաքական համակարգի տարբեր սահմանումները՝ դժվար չէ նկատել, որ շատ հետազոտողներ կարևորում են ինստիտուտային, կառուցվածքային և գործառութային մոտեցումները: Դա, անկասկած, ունի իր արդարացումը: Արիստոտելը, «Տոպիկա» աշխատության մեջ հանգամանալից քննարկելով երևույթների սահմանման հիմնական սկզբունքների, մոտեցումների ու մեթոդների վերաբերյալ հարցեր, հատկապես ընդգծում է, որ ամեն մի բնորոշում ոչ այլ ինչ է, եթե ոչ խոսք, որը մատնանշում է բնորոշվող երևույթի էությունը, ինչ լինելը: «Ով տալիս է սահմանում,– գրում է նա,– պետք է օգտագործի որքան հնարավոր է ավելի պարզ արտահայտություններ, քանի որ սահմանումը տրվում է հանուն իմացության»[1]:

Քաղաքական կյանքի համակարգային հետազոտման գաղափարը հիմնականում մշակվել է Տ. Պարսոնսի կողմից: Նա քաղաքական համակարգն առավելապես դիտարկում էր սոցիալական գործողությունների վերլուծության կտրվածքով, գործողություններ, որոնք հանդես են գալիս որպես մարդկանց վարքի բազմազան դրսևորումներ: Այդ նպատակով նա առանձնացնում է լիդերությունը, իշխանության մարմինները և կանոնակարգումը որպես քաղաքական համակարգի փոխկապակցված և ենթահամակարգ հանդիսացող ինստիտուտներ: Այդ ամենը Տ. Պարսոնսը ներառում է կառուցվածքային–գործառութային միասնության մեջ՝ որպես քաղաքական համակարգի էական հատկանիշ: Նա կարևորում է քաղաքական համակարգի ոչ միայն ինստիտուտային կառուցվածքի փաստը, այլև այն գործառույթները, որոնք կազմակերպվում և իրականացվում են նորմատիվ կարգավորման շրջանակներում:

Դ. Իստոնը, հիմք ընդունելով Տ. Պարսոնսի հայեցակարգը քաղաքական համակարգի կառուցվածքային–գործառութային հատկանիշի և դրանցում մարդկանց վարքի դրսևորումների մասին, առաջ է քաշում և հիմնավորում մարդկանց քաղաքական վարքը որոշակի սոցիալական միջավայրում դրսևորվելու հանգամանքների, մասնավորապես նրանց վրա միջավայրի ազդեցության և դրան համապատասխան վերաբերմունքի ինչպես սոցիոլոգիական, այնպես էլ քաղաքագիտական ու նորմատիվային վերլուծության և իմաստավորման անհրաժեշտությունը:

Գ. Ալմոնդի սահմանումներից մեկում նշված է. «Քաղաքական համակարգը ինստիտուտների և մարմինների մի ամբողջություն է, որոնք ձևավորում և կյանքում իրականացնում են հասարակության կամ նրա առանձին խմբերի կոլեկտիվ նպատակները»[2]: Այստեղ հիմնականում շեշտված է քաղաքական համակարգի գործառութային կողմը:

Նույն աշխատանքի մեջ Ալմոնդը քաղաքական համակարգի կառուցվածքային տարրեր է համարում քաղաքական կուսակցությունները, շահերի խմբերը, իշխանության օրենսդիր մարմինները, իշխանության գործադիր մարմինները, աստիճանավորականությունը (չինովնիկությունը) և դատարանները: Նա գտնում է, որ այդպիսի կառուցվածքային տարրեր ունեն գործնականում բոլոր քաղաքական համակարգերը: Բայց միաժամանակ շեշտում է, որ դրանց գործունեությունը, առանձին ինստիտուտների դերն ու նշանակությունը տարբեր քաղաքական վարչակարգերի պայմաններում տարբեր են: Ալմոնդը ճիշտ է նկատում, որ քաղաքական համակարգերում այդ տարրերի առկայությունը դեռևս բավարար հիմք չի հանդիսանում քաղաքական համակարգն ըստ էության գնահատելու համար: Նա հատկապես նշում է Մեծ Բրիտանիայի և Չինաստանի քաղաքական համակարգերում այդ ինստիտուտների գործունեության և փոխհարաբերությունների արմատական տարբերությունները[3]:

Սակայն այստեղ ուշադրության արժանի է մի այլ հանգամանք ևս: Ալմոնդը քաղաքական համակարգի կառուցվածքային տարրեր է համարում պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինները: Կարծում եմ, որ դրանք չեն կարող դիտարկվել որպես քաղաքական համակարգի կառուցվածքային տարրեր: Դրանք, պետական իշխանության համակարգի ինստիտուտներ լինելով, գործում են միայն պետության շրջանակներում և միայն պետության կազմում և պետության միջոցով են հանդես գալիս որպես ինստիտուտներ: Պետք է նկատել, որ ոչ միայն Ալմոնդի, այլև շատ այլ մտածողների մոտ քաղաքական համակարգի վերաբերյալ հարցեր քննելիս հաճախ են համակարգի ինստիտուտներ համարվում պետական իշխանության մարմինները: Այդպիսի մոտեցումը, թերևս, կարող է ունենալ իր արդարացումը միայն բացարձակ բռնապետության և ամբողջատիրական վարչակարգերի հարցեր քննարկելու դեպքում, որտեղ պետությունը չի տարանջատվում քաղաքական համակարգից: Ավելին՝ պետությունը դիտարկվում է որպես համընդգրկող կազմավորում և հասարակության քաղաքական համակարգի մարմնացում: Բայց դա ամենևին հիմք չի տալիս պետական իշխանության մարմինները բոլոր դեպքերում դիտարկելու որպես հասարակության քաղաքական համակարգի ինքնուրույն ինստիտուտներ:

Գ. Ալմոնդը և Դ. Պաուելը, ընդլայնելով հասարակության քաղաքական համակարգի խորքային պատճառական կապերի իմացության պահանջների շրջանակները, է՛լ ավելի կարևորեցին համեմատական վերլուծությունների միջոցով ինստիտուտների, մարդկանց մեծ ու փոքր խմբերի քաղաքական մասնակցության և ընդհանրապես մարդկանց կոնկրետ քաղաքական վարքագծի հանգամանալից քննարկման և արժևորման խնդիրը: Հենց դրանով է պայմանավորված նրանց համոզմունքը, որ քաղաքական համակարգը դերերի և փոխգործողությունների ամբողջություն է, որոնք իրականացվում են ոչ միայն պետական ինստիտուտների, այլև բոլոր մյուս կառույցների միջոցով: Այս սահմանման մեջ թեև անմիջականորեն չի նշվում այդ դերերի և գործողությունների նորմատիվ հիմքե-

րի մասին, այնուամենայնիվ անկասկած է, որ նրանք քաղաքականության սուբյեկտների դերակատարումներն ու փոխգործողությունները դիտարկում են օրինականության շրջանակներում վարքագծի դրսևորումների նորմատիվ կարգավորման համատեքստում:

Քաղաքական համակարգի հետազոտման համար Կ. Դոյչը կարևորում է մեկ այլ գործոն, գտնում է, որ քաղաքականությունը միտված է կառավարման գործընթացի կազմակերպման և մարդկանց գործողությունները կոորդինացնելու, դրանք առավել արդյունավետ դարձնելու նպատակին: Իսկ դրա համար անհրաժեշտ է ունենալ հավաստի տեղեկություններ, հենվել բարձրորակ և ծավալուն փաստերի վրա: Հենց այդ նպատակով է նա առաջ քաշում պահանջ՝ տեղեկատվական (կոմունիկացիոն) մոտեցմամբ արժևորելու և գնահատելու տեղեկատվական նյութը, համոզվելու քաղաքական որոշումների ընդունման, մարդկանց գործողությունները կոորդինացնելու և հասարակության կառավարումն իրականացնելու փաստական հիմքերի հավաստիության, լիարժեքության և կարևորության մեջ:

Ա.Զ. Դեմիդովը քաղաքական համակարգի մեջ ընդգրկում է նորմերը, գաղափարները և նրանց հիմքով ձևավորված ինստիտուտներն ու գործողությունները, որոնց միջոցով կազմակերպվում են քաղաքական իշխանությունը և քաղաքացիների ու պետության փոխադարձ կապերը[4]: Նա միաժամանակ նշում է քաղաքական համակարգի այն հատկանիշները, որոնք բովանդակում են դրա հիմնական իմաստը: Դրանցից է համարում քաղաքական համակարգի տարրերի կայուն փոխադարձ պայմանավորվածությունը, քաղաքական հարաբերությունների կարգավորվածությունը, առավել օպտիմալ կայունությունն ու զարգացումը, հոգևոր–մշակութային արժեքների միասնությունը, համոզմունքները և այլն:

Քաղաքական համակարգի էության, կառուցվածքի և հատկանիշների վերաբերյալ հեղինակի մտքերը ճիշտ են արտահայտում այդ երևույթի հիմնական բովանդակությունը և, անկասկած, ունեն որոշակի գիտական արժեք: Սակայն չի կարելի ճիշտ համարել նրա այն պնդումը, թե հասարակության քաղաքական համակարգի տարրերն են նորմերը և գաղափարները[5]:

Այդպիսի հախուռն կարծիքը չի կարող ճիշտ համարվել երկու տեսանկյուններով. նախ՝ քաղաքական համակարգը բազմաշերտ է, ընդգրկում է բազմադեմ, տարբեր գաղափարախոսություններ ու քաղաքական կողմնորոշումներ որդեգրած, տարբեր կարգավիճակներ և իրավունքներ ունեցող, ոչ միատեսակ, իսկ երբեմն էլ իրարամերժ քաղաքական վարքագիծ դրսևորող հաստատություններ ու միավորումներ: Ահա թե ինչու սոցիալական միջավայրի և արտաքին ազդեցությունների նկատմամբ նրանց վերաբերմունքը չի կարող միատեսակ ու միաժամանակյա լինել: Այդ կարծիքը մերժելի է նաև այն տեսանկյունով, որ հեղինակը հստակ չի նշում «արտաքին ազդեցություններ» արտահայտության բովանդակությունը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ «արտաքին ազդեցությունները» կարող են ընդգրկել սոցիալ–քաղաքական կյանքի զանազան երևույթներ՝ վերաբերել ներքաղաքական, ներերկրային, արտաքին սոցիալ–քաղաքական կյանքի տարբեր ոլորտներին:

Այդ գործոնների «արտաքին ազդեցությունները» միմյանցից տարբերվում են ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլև նպատակներով և հասցեատերերով: Քաղաքական համակարգի ինստիտուտներն ու միավորումները արտաքին ազդեցությունների նկատմամբ կարող են վերաբերմունք դրսևորել միայն իրենց կարգավիճակի և իրավասությունների շրջանակներում:

Վ.Ա. Մելնիկն անկասկած է համարում այն փաստը, որ քաղաքական գիտության մեջ քաղաքական համակարգը դիտվում է որպես պետական և ոչ պետական ինստիտուտների և սոցիալական ու իրավական նորմերի ամբողջություն, որոնց միջոցով իրականացվում են քաղաքական–իշխանական հարաբերությունները[6]:

Մ.Ա. Վասիլիկի խմբագրությամբ «Քաղաքագիտություն» դասագրքի մեջ նշված է, որ **«Քաղաքական համակարգը իրենից ներկայացնում է պետական և հասարակա-**

կան կազմակերպությունների, միավորումների, հասարակության մեջ քաղաքական իշխանության կազմակերպման և իրականացման իրավական ու քաղաքական նորմերի, սկզբունքների ամբողջություն»[7]:

Եթե ընդունում ենք, որ «քաղաքական իշխանության կազմակերպման և իրականացման իրավական ու քաղաքական նորմերը, սկզբունքները», որոշակի ինստիտուտների հետ կապված, հանդես են գալիս որպես քաղաքական համակարգի տարրեր, ապա, փաստորեն, ուշադրությունից վրիպում են քաղաքական համակարգի ոչ քաղաքական ինստիտուտներն ու օրինականության շրջանակներում դրանց կազմավորման ու գործունեության այն սոցիալական նորմերը, այդ թվում՝ կանոնադրական, բարոյական, կրոնական, կորպորատիվ նորմերը, ավանդույթները, սովորույթները, որոնք հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի շարքում, օրինականության շրջանակներում, ունեն իրենց որոշակի դերն ու նշանակությունը:

Քաղաքական համակարգի նույնպիսի բնութագրություններ ենք հանդիպում իրավագիտական գրականության մեջ: Ա.Բ. Վենգերովը նշում է. «Հասարակության քաղաքական համակարգի տակ հասկացվում են պետական և ոչ պետական սոցիալական ինստիտուտները, որոնք իրականացնում են որոշակի գործառույթներ»[8], որ այն «տարբեր սոցիալական ինստիտուտների և դրանց որոշակի բնույթի կապերի օբյեկտիվորեն կայացող միասնություն է»[9]:

Դժվար չէ նկատել, որ Ա.Բ. Վենգերովը քաղաքական համակարգի հիմնական բաղադրատարր է համարում սոցիալական ինստիտուտները, թեև միաժամանակ նշում է դրանց միջև կապերի՝ որպես համակարգի տարրեր լինելու հանգամանքը:

Հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի պարզաբանման համար փաստական, տեսական, իմացաբանական ու մեթոդաբանական հարուստ նյութ են պարունակում քաղաքական համակարգերի տիպաբանման ոլորտում առաջ քաշված զանազան մոդելները:

Քաղաքական երևույթների համակարգումն ու դրանց տիպաբանական վերլուծությունները, անկասկած, ունեն գիտաճանաչողական կարևոր նշանակություն: Քաղաքական համակարգերի տիպաբանումը, տիպաբանման հիմքերի հստակ առանձնացումը, քաղաքական համակարգերի համեմատական վերլուծությունների միջոցով դրանց ընդհանուր կողմերի ու հատկանիշների վերհանումը և յուրաքանչյուրի առանձնահատկությունների պատճառաբանումը քաղաքական կյանքի ճշմարիտ իմացության, հիրավի, կարևոր ու առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիրներ են:

Քաղաքական համակարգերի տիպաբանման և վերլուծությունների գործընթացներում հիմք են ընդունվում ոչ միայն պետության հատկանիշները, կառուցվածքը, պետական իշխանության մարմինների կազմավորման ու գործառնությունների հիմունքները, այլև քաղաքական վարչակարգերի բնույթը, հասարակության քաղաքական կազմակերպման սկզբունքները, հասարակության քաղաքական սոցիալականացման ու մշակույթի բնույթն ու մակարդակները, ընդդիմության իրավաքաղաքական կարգավիճակը և քաղաքական մասնակցության հիմնական ուղիներն ու եղանակները, քաղաքական իշխանության էլիտար կառուցվածքը, էլիտար փոփոխությունների հիմքերը և հասարակական զարգացման առավել նշանակալի միտումները: Նկատենք, որ այդ հիմքերով քաղաքական համակարգի բնութագրությունն ամենևին չի կարելի արդարացնել, քանզի դրանք քաղաքական համակարգի տարարժեք դրսևորումների միտումներն են:

Քաղաքական համակարգերի տիպաբանման կարևոր հենքերից են ներհամակարգային գործընթացների՝ պետական և ոչ պետական, քաղաքական և ոչ քաղաքական ինստիտուտների, զանազան հաստատությունների, կազմակերպությունների ու միավորումների փոխհարաբերությունների առանձնահատկությունները, ներերկրային արտաքաղաքական–համակարգային գործընթացները, հասարակության տնտեսական,

սոցիալական, քաղաքական, հոգևոր–մշակութային զարգացման մակարդակները, առնչությունների բնույթն ու առանձնահատկությունները:

Այդպիսի հիմքով քաղաքական համակարգերի տիպաբանման հայեցակարգերում և մոդելներում նկատում ենք բազում հարցադրումներ և կոնկրետ առաջարկություններ քաղաքական ինստիտուտների կազմավորման, գործունեության ու փոխհարաբերությունների, քաղաքական հարաբերությունների ու գործընթացների նորմատիվ կարգավորման հիմքերի ու եղանակների վերաբերյալ: Ուշադրություն դարձնենք առավել նշանակալի մի քանի մոդելների վրա:

Քաղաքական համակարգերի գծային՝ երկբևեռ տիպաբանման մոդելներից է Գ. Լասուելի և Ա. Կապլանի առաջարկած մոդելը, որտեղ քաղաքական համակարգերը բաժանվում են երկու խմբերի՝ ժողովրդավարականի և բռնատիրականի: Նրանք հանգամանալից քննարկում են ժողովրդավարական և բռնատիրական քաղաքական համակարգերում քաղաքական կյանքի կազմակերպման, քաղաքական և ոչ քաղաքական ինստիտուտների կազմավորման ու գործունեության կարգի, փոխհարաբերությունների կարգավորման և պետական իշխանական հարաբերություններին մասնակցելու մեխանիզմների, իշխանության մեջ չափաբաժին ունենալու վերաբերյալ հարցեր:

Այս մոդելի ելակետն ու հիմքը իդեալական ժողովրդավարական և իդեալական բռնատիրական քաղաքական համակարգերի գաղափարն է: Բայց իրական կյանքում բացարձակ ժողովրդավարական և բացարձակ բռնատիրական քաղաքական համակարգեր չեն լինում: Հենց այդ իրողության հաշվառմամբ պետք է բացատրել քաղաքական համակարգերի տիպաբանման մեջ նրբերանգներ նկատելու և նոր տարբերակներ առաջարկելու միտումները:

Գ. Ալմոնդը և Բ. Պաուելը, չժխտելով քաղաքական համակարգերի գծային տիպաբանման մոդելի ճանաչողական արժեքը, նպատակահարմար են գտնում քաղաքական համակարգերի մեջ տարբերել ժողովրդավարականը և ավտորիտարը՝ հիմք ընդունելով քաղաքական զարգացումների գործընթացներում դրանց հնարավոր փոխակերպումները, տվյալ տիպին բնորոշ հատկանիշների ուժեղացումը, թուլացումը կամ էլ այլ տիպին բնորոշ այս կամ այն հատկանիշի ձեռքբերումը: Նրանք հատկապես կարևորում են յուրաքանչյուր տիպի քաղաքական համակարգերում առանձին խմբերի, ավելի կամ պակաս ընդգծված, տվյալ տիպին բնորոշ հատկանիշներ ունեցող կողմերի հայտնաբերումը. ավտորիտար համակարգերում տարբեր մակարդակների ամբողջատիրական և ոչ ամբողջատիրական վարչակարգերի, իսկ ժողովրդավարական տիպի համակարգերում տարբեր մակարդակների ինքնավարությունների հստակ տարբերակումը, դրանց էական հատկանիշների համեմատական վերլուծությունները և հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորման առանձնահատկությունների պարզաբանումը:

Քաղաքական համակարգերի գծային՝ երկբևեռ տիպաբանման մոդելը, կարևոր նշանակություն ունենալով հանդերձ, որոշ առումով սահմանափակում, կաղապարում է երևույթի օբյեկտիվորեն բազմաչափ հնարավորությունների կիրառումը: Քաղաքական համակարգերի բազում կողմեր ու հատկանիշներ, ինստիտուտների կազմավորման գործառույթների և փոխհարաբերությունների կարգավորման սկզբունքներն ու նորմերը և դրսևորման առանձնահատկությունները շատ դեպքերում հնարավոր չեն լինում հստակ պարզաբանել երկբևեռ մոտեցման եղանակի կիրառման շրջանակներում: Հենց այդ հանգամանքներով պետք է բացատրել քաղաքական համակարգերի տիպաբանման նոր հայեցակարգերի մշակումը և նոր մոդելների առաջարկումը (Ռ. Դալ, Ե. Լեյպխարտ, Ժ. Բլոնդել):

Դալը քաղաքական համակարգի որակման հիմնական չափորոշիչներ է համարում մրցակցության հիմունքներով և օրինականության շրջանակներում ընդդիմության քաղաքական մասնակցության իրական վիճակը և մյուսը՝ քաղաքական իշխանության համար

պայքարի գործընթացներին բնակչության իրական մասնակցության չափը: Դրանք, որպես փոփոխական մեծություններ, տարբեր ծավալով ու տարբեր կերպ են դրսևորվում տարբեր քաղաքական համակարգերում, դրանով իսկ, փաստորեն, պայմանավորում այդ համակարգերի իրական արժեքն ու որակը: Ընդդիմության և բնակչության քաղաքական մասնակցության իրավական հիմքերը սահմանվում են ինչպես երկրի Սահմանադրությամբ, այնպես էլ նորմատիվ իրավական ակտերով:

Լեյպխարտի հայեցակարգում հասարակության քաղաքական համակարգի որակման հիմք են համարվում հասարակության կառուցվածքը՝ միատարր կամ բազմատարր (բազմանդամ) լինելը և քաղաքական էլիտաների վարքագիծը՝ դրանց թշնամական կամ կոմպրոմիսային կողմնորոշումների հանգամանքը:

Լեյպխարտը, հիմք ընդունելով կոնկրետ երկրների փորձը, ցույց է տալիս այդ հիմունքներով քաղաքական համակարգերի տիպաբանման և որակման գիտաճանաչողական արժեքը: Նա միաժամանակ գտնում է, որ այդ չափորոշիչները կայուն մեծություններ չեն: Քաղաքական զարգացումների և հանգամանքների փոփոխման հիմքով դրանք փոփոխվում և դրանով իսկ փոխում են քաղաքական համակարգի դեմքը: Այդ և այլ չափորոշիչների կիրառման հնարավորությունը չժխտելով հանդերձ՝ նա գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել այն իրողությունը, որ բացարձակ միատարր կամ բացարձակ բազմատարր հասարակություններ չեն լինում, միշտ էլ լինում են անցումային փուլեր, նոր իրավիճակներ: Չեն լինում նաև միշտ թշնամաբար տրամադրված կամ միայն կոմպրոմիսային տրամադրություն ունեցող էլիտաներ:

Պատմական իրողությունը վկայում է, որ ինչպիսին էլ լինեն հասարակության քաղաքական համակարգի կայացման հիմքերն ու մեխանիզմը, դրանց զարգացումներն ու փոխակերպումները, բոլոր դեպքերում քաղաքական համակարգերի որակման սկզբունքներն ու չափորոշիչներն ամրագրվում են համապատասխան նորմատիվ իրավական և սոցիալական այլ նորմերի համապատասխան ակտերում:

Ի տարբերություն Դալի և Լեյպխարտի՝ Ժան Բլոնդելն ընտրում է բազմանդամ գործոնների հիմքով քաղաքական համակարգը բնութագրելու մեթոդը: Նա հիմնականում չափորոշիչներ է համարում քաղաքական մրցակցությունն իր դրսևորման տարբեր ձևերով (լեգալ, ոչ լեգալ), քաղաքական էլիտայի կառուցվածքը, էլիտաների տարբեր խմբերի իրավական և քաղաքական կարգավիճակները և բնակչության քաղաքական մասնակցությունը, որը կարող է իրականացվել տարբեր ուղիներով ու ձևերով, տարբեր ծավալներով ու ակտիվությամբ: Այդ չափորոշիչները նույնպես փոփոխական մեծություններ են:

Քաղաքական համակարգի սահմանումները և տարբեր հիմունքներով քաղաքական համակարգերի բնութագրություններն ու որակումները, միմյանց հետ կապված լինելով հանդերձ, նույնական բովանդակություն չեն ունենում: Դրանք քաղաքական համակարգի ճանաչման և արժևորման առանձնահատուկ մեթոդներ են: Բնորոշումն ընդգրկում է համակարգի խորքային պատճառական կապերը, կայացման ակունքները, բաղադրատարրերի կազմավորման և գործառնությունների հիմունքները: Մինչդեռ քաղաքական համակարգերի բնութագրություններն ու որակումներն իրականացվում են դրանց առանձին հատկանիշների, կողմերի, գործառնությունների, սոցիալական կոչման և դերակատարումների արժևորման ու գնահատման հիմքով: Դրանք պայմանավորված են այդ երկու՝ թեև միմյանց հետ սերտորեն կապված, բայց և այնպես տարբեր մոտեցումներով: Ըստ որում՝ դրանցում նկատում ենք այս կամ այն մոտեցման գերակայման կամ էլ խառը կիրառման դեպքեր:

Քաղաքական համակարգի դասական բնորոշումներում (Տ. Պարսոնս, Դ. Իստոն, Գ. Ալմոնդ) գերակայությունը տրվում է ինստիտուտային մոտեցմանը, հիմնավորվում այն գաղափարը, որ քաղաքական համակարգի բաղադրատարրեր են պետությունը, քաղաքական կուսակցությունները, զանազան այլ հաստատություններ ու միավորումներ:

Դրանց բնույթը պայմանավորող գործոնները, կազմավորման և գործառույթների հիմունքները, սոցիալական դերերն ու փոխհարաբերությունները քաղաքական համակարգի մեջ ընդգրկվում են՝ միայն այդ նյութական կազմավորումների՝ ինստիտուտների հետ կապված: Այնպես որ քաղաքական համակարգի բազում բնորոշումներում ժողովրդավարության, վարչակարգերի, իրավունքի, քաղաքական և այլ կորպորատիվ նորմերի ընդգրկումը՝ որպես ինքնուրույն բաղադրատարրերի, հիմնավոր չէ և չի կարող արդարացվել:

Կարելի է հիշատակել քաղաքական համակարգի բազմաթիվ բնորոշումներ և բնութագրություններ, որոնցում միշտ չէ, որ հստակ տարբերակվում են մոտեցումներն ու որակման չափորոշիչները: Բայց անժխտելի է այն փաստը, որ անկախ այն բանից, թե ովքեր քաղաքական համակարգի որ կողմերն են կարևորում և ինչ պատճառաբանություններով են հիմնավորում իրենց մոտեցումներն ու ըմբռնումները, բոլոր դեպքերում, այսպես թե այնպես, քննարկում ու վերլուծում են քաղաքական համակարգի հետևյալ երեք հիմնական կողմերին վերաբերող հարցեր: Դրանք են.

1. կառուցվածքային տարրերը՝ ինստիտուտներ, ենթահամակարգային կազմավորումներ, նյութական և հոգևոր արժեքներ բովանդակող երևույթներ՝ սոցիալական նորմեր, քաղաքական սոցիալականացման և քաղաքական մշակույթի ու քաղաքակրթվածության որոշակի մակարդակ,
2. գործառույթները՝ քաղաքական մասնակցություն, գործողություններ, հարաբերություններ, գործընթացներ,
3. հասարակական–քաղաքական կյանքի կազմակերպման, կանոնակարգման և կարգավորման հիմունքները՝ սոցիալական նորմերի՝ իրավունքի, քաղաքական, կանոնադրական, կրոնական, բարոյական և կորպորատիվ նորմերի կիրառում, նորմատիվ կարգավորման մեխանիզմների ստեղծում, քաղաքական համակարգի պահպանման, պաշտպանության և վերարտադրության հուսալի հիմքերի ստեղծում:

Մեր կարծիքով՝ հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի պարզաբանման համար ամենևին անհրաժեշտություն չկա հանգամանալից քննարկելու, վերլուծելու և գնահատելու տարբեր մոտեցումներն ու սահմանումները: Միայն նկատենք, որ դրանցից յուրաքանչյուրում կան արժեքավոր կողմեր, ճշմարիտ և օգտակար գաղափարներ: Չենք կարող չնկատել նաև մի շարք մոտեցումներում և սահմանումներում առկա միակողմանիության, սահմանափակվածության, վերացականության, ոչ միշտ առարկայական ու բովանդակալից լինելու, քաղաքական համակարգի բովանդակությունն ու տիրույթն անհարկի նեղացնելու կամ ընդլայնելու, իսկ առանձին դեպքերում դրա տարբեր կողմերի ու հատկանիշների ոչ ճիշտ ըմբռնումների ու մեկնաբանումների փաստերը:

Հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի արդյունավետ պարզաբանման, դրանց էության, հիմնական տեսակների, առնչությունների, նորմատիվ կարգավորման մեխանիզմներում տեղի, դերի և նշանակության համեմատական վերլուծության համար նպատակահարմար է, նախ, պարզաբանել հետազոտման օբյեկտների, այն է՝ քաղաքական համակարգի՝ նորմատիվ կարգավորման ենթակա կողմերի դրսևորման առանձնահատկությունները սոցիալ–քաղաքական կյանքի տարբեր հատվածներում՝ քաղաքական համակարգի սոցիալական միջավայրերի ու շրջապատի առնչությունների հաշվառման համատեքստում:

Հասարակության քաղաքական համակարգի մեծ գիտակներ Իստոնը և Ալմոնդը, առաջ քաշելով սոցիալական միջավայրի և դրա հետ կապված տեղեկությունների ստացման ու դրանց նկատմամբ համապատասխան վերաբերմունքի քննական վերլուծությունների հիմքով համակարգի հիմնավոր և համալիր պատկերի ստեղծման հայեցակարգերը, մատնանշեցին հասարակության նորովի ու բարձր մակարդակով իմաստավորելու հիմնական ուղիները:

Քաղաքական համակարգի բազմաշերտ լինելը, պայմանավորված այն իրողությամբ, որ նրանում ընդգրկված են քաղաքական ու ոչ քաղաքական բազմաթիվ հաստատություններ, կազմակերպություններ ու միավորումներ, բնականաբար, օրակարգի է դնում նրանց առնչությունների ու կապերի պարզաբանման, փոխհարաբերությունների, համագործակցության կամ ընդդիմադիր կեցվածքի հիմքային պատճառների բացահայտման ու գնահատման հարցերը:

Քաղաքական համակարգի յուրաքանչյուր տարրի համար մյուս բոլոր տարրերը կամ դրանց խմբերը, այսպես թե այնպես, հանդես են գալիս որպես սոցիալ–քաղաքական միջավայրի գործոններ: Այդ միջավայրը միշտ էլ բազմազան է լինում: Տարբերում ենք ներքին և արտաքին, հիմնական և հարակից, անմիջական և միջնորդավորված միջավայրեր: Բացի սոցիալ–քաղաքական և հոգևոր–մշակութային միջավայրերից, քաղաքական համակարգի գործառնությունները առնչվում են նաև այնպիսի գործոնների հետ, որոնք ոչ այնքան միջավայրի, որքան շրջապատի դեր են խաղում: Իստոնի և Ալմոնդի հայեցակարգերում տրված են սոցիալ–քաղաքական միջավայրերի բնութագիրը և տեղեկությունների ստացման/հաղորդման և դրանց նկատմամբ վերաբերմունքի /պատասխանի/ առավել ընդհանրական նշանակություն ունեցող դրսևորումների գնահատականը: Բնական է՝ սոցիալ–քաղաքական և հոգևոր–մշակութային միջավայրերի բնութագրությունները չեն կարող համընդգրկուն լինել՝ արտացոլել դրանց բոլոր հնարավոր դրսևորումները և էական հատկանիշները: Եվ իսկապես, քաղաքական համակարգի և սոցիալ–քաղաքական միջավայր/շրջապատի առնչությունները շատ ավելի բազմազան են և տարբեր նշանակություն ունեն քաղաքական համակարգին ներհատուկ նորմատիվ կարգավորման եղանակների կիրառման համար, քան դրանք ներկայացվում են քաղաքագիտական գրականության մեջ, հատկապես ուսումնական: Ահա թե ինչու անհրաժեշտ է ընդհանուր գծերով ցույց տալ քաղաքական համակարգի սոցիալ–քաղաքական միջավայրերի և շրջապատի հիմնական տեսակները:

«Սոցիալ–քաղաքական և հոգևոր–մշակութային միջավայր/շրջապատ» հասկացությունը բովանդակում է աշխարհագրական միջավայրին վերաբերող արժեքներ, բայց չի նույնանում նրա հետ: Քաղաքական համակարգի սոցիալ–քաղաքական միջավայրը և շրջապատը ավելի լայն բովանդակություն ունեն, քան դրա կայացման ու գործառնությունների վայրն է: Այն մատնանշում է թե՛ աշխարհագրական տարածքի և թե՛ սոցիալական ու քաղաքական տարածքի/դաշտի առկայությունը: Այդ երկհիմք պայմանավորվածությունը նկատի ունենալով էլ հենց պետք է խմբավորել սոցիալ–քաղաքական և հոգևոր–մշակութային միջավայրերն ու շրջապատը:

Քաղաքագիտական գրականության մեջ նշված հարցերը միշտ չէ, որ հստակ են պարզաբանվում: Հաճախ փոխեփոխ օգտագործվում են թե՛ «միջավայր» և թե՛ «շրջապատ» հասկացությունները: Դա նկատում ենք նաև Գ. Ալմոնդի մոտ: Ահա թե ինչու, թերևս, ճիշտ կլիներ, չժխտելով սոցիալական միջավայրի և սոցիալական շրջապատի առնչությունները, տարբերել դրանք՝ հիմք ընդունելով այն իրողությունը, որ սոցիալական միջավայրն ավելի մոտ է երևույթին: Մինչդեռ սոցիալ–քաղաքական և հոգևոր–մշակութային շրջապատը, որոշ առումով, արտաքին է, հարակից:

Նկատի ունենալով միջավայրի և շրջապատի առնչությունների բովանդակային և գործառութային նրբերանգները՝ նպատակահարմար է դրանք հիշատակել միասին: Այս առումով կարող ենք տարբերել երեք խումբ միջավայր/շրջապատ: Դրանք են.

1. քաղաքական համակարգի ներքին՝ ներհամակարգային միջավայր/շրջապատ,
2. քաղաքական համակարգի ներերկրային արտաքին՝ արտահամակարգային միջավայր/շրջապատ,
3. արտաքին՝ արտահամակարգային, արտաերկրային միջավայր/շրջապատ:

Խմբերից յուրաքանչյուրում սոցիալական, քաղաքական և հոգևոր–մշակութային

միջավայրերն ու շրջապատը ունեն իրենց գոյության ձևերը, որոնց պայմաններում հասարակական–քաղաքական հարաբերությունների նորմատիվ և ոչ նորմատիվ միջոցներով կարգավորումներն իրականացվում են առանձնահատուկ կարգով ու մեխանիզմներով:

Քաղաքական համակարգի ներքին` ներհամակարգային միջավայր/շրջապատի հիմնական տեսակներն են`

– քաղաքական ինստիտուտների` պետության, քաղաքական կուսակցությունների և զանազան քաղաքական կազմակերպությունների ու միավորումների փոխհարաբերությունների միջավայր/շրջապատը,
– ոչ քաղաքական ինստիտուտների փոխհարաբերությունների միջավայր/շրջապատը,
– քաղաքական ինստիտուտների և ոչ քաղաքական ինստիտուտների (մասնավորապես պետության և ոչ պետական հաստատությունների) միջև փոխհարաբերությունների միջավայր/շրջապատը,
– քաղաքական կուսակցությունների և զանազան ոչ քաղաքական միավորումների փոխհարաբերությունների միջավայր/շրջապատը:

Քաղաքական համակարգի ներհամակարգային միջավայր/շրջապատի շարքում առանձնահատուկ նշանակություն ունեն` սոցիալ–քաղաքական ուժերի հարաբերակցությունը, երկրի ազգային անվտանգության հետ կապված հիմնախնդիրները, քաղաքական իրավիճակը (քաղաքական կայունությունը, նպաստավոր հասարակական կարծիքը, պետական քաղաքականության ակնառու պաշտպանությունն առավել նշանակալի քաղաքական կշիռ ունեցող կուսակցությունների և մարդկանց լայն զանգվածների կողմից կամ երկրում առկա անկայունությունը, քաղաքական ուժերի միջև լարվածությունը, քաղաքական հուզումները, զանգվածային բնույթի ձեռնարկումները, հասարակական կարծիքի և քաղաքական կողմնորոշումների էական հակամետ փոփոխությունները, երկրի անկառավարելիությունը, համակարգային ճգնաժամը, քաոսը, երկրում զանգվածային կարգախախտումները, ամբոխավարությունը, հեղաշրջումների ու հեղափոխությունների փորձերը), պետության անկարողությունը պահպանել ու պաշտպանել իրավակարգն ու օրինականությունը, պետական իշխանության օրենսդրական, գործադիր և դատաիրավական համակարգերի կազմալուծման և գործառույթների խաթարման վտանգը և այլն:

Քաղաքական համակարգի ներերկրային արտաքին սոցիալական միջավայր/շրջապատը: Այս խմբում կարող ենք տարբերել հետևյալ ոլորտները.

– քաղաքական համակարգի տնտեսական միջավայրը (տնտեսական համակարգը` նյութական բարիքների արտադրության, փոխանակման ու բաշխման հարաբերությունների բնագավառն իր բոլոր ճյուղավորումներով),
– սոցիալական կյանքն իր հետևյալ ոլորտներով` հասարակության էթնիկական–ազգային կառուցվածքը (էթնիկական խմբերը, ազգերը, ազգային մեծ ու փոքր խմբերն իրենց առանձնահատուկ շահերով, պահանջմունքներով, նպատակներով ու խնդիրներով), հասարակության սոցիալական կառուցվածքը (դասակարգերը, սոցիալական շերտերն ու խմբերն իրենց առանձնահատուկ շահերով, պահանջմունքներով, նպատակներով ու խնդիրներով), սոցիալական ոլորտը որպես առանձնահատուկ միջավայր, մարդկանց ոչ արտադրական կենսագործունեությունը` կապված նրանց նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման հետ` աշխատանքի և վարձատրության, բնակարանային ապահովվածության, առողջապահության, կրթության, սոցիալական ապահովության, ազատ ժամանակի ռացիոնալ օգտագործման և այլ ոլորտները,
– հասարակության հոգևոր կյանքը` որպես քաղաքական համակարգի ներերկրային արտաքին սոցիալական միջավայր: Հոգևոր–մշակութային կյանքն իր

արժեքներով ու հաստատություններով, հոգևոր–մշակութային կյանքի կազմակերպման ռեսուրսներն ու հիմունքները, հոգևոր–մշակութային կյանքի ծավալը, ընդգրկման շրջանակները, մակարդակը, բովանդակությունը, զարգացման հիմնական միտումներն ու պահանջները:

Քաղաքական համակարգի արտաերկրային սոցիալ–քաղաքական միջավայր/շրջապատը: Այս խմբի հիմնական ոլորտներն են միջազգային իրադրությունը, մեծ պետությունների և պետությունների խմբավորումների ուժերի հարաբերակցությունը, դրա հնարավոր փոփոխման միտումները, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների ու կառույցների դիրքորոշումներն ու վերաբերմունքը, համաշխարհային հանրային կարծիքի փոփոխման հնարավոր միտումները, հասարակական կյանքի զանգվածային գլոբալացման պայմաններում տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններին ու կառույցներին անդամակցելու, տնտեսական, քաղաքական, հոգևոր–մշակութային ոլորտներում համագործակցության և ինտեգրման հետ կապված խնդիրները և այլն:

Քաղաքագիտական հետազոտություններում հասարակության քաղաքական համակարգի սոցիալ–քաղաքական միջավայր/շրջապատի մեջ ոմանք (այդ թվում` Իստոնը, Ալմոնդը և այլք) ներառում են նաև պետական ինստիտուտների փոխհարաբերությունների միջավայրը: Սակայն, ըստ էության, ներպետական փոխհարաբերությունների սոցիալ–քաղաքական միջավայրը, որքան էլ սերտորեն կապված լինի քաղաքական համակարգի հետ, այնուամենայնիվ չպետք է դիտարկվի որպես հասարակության քաղաքական համակարգի սոցիալ–քաղաքական միջավայր/շրջապատի տարատեսակ, քանզի այն դրսևորվում է պետական համակարգի տիրույթում և ամենևին ներհատուկ չէ հասարակության քաղաքական համակարգին ընդհանրապես: Ահա թե ինչու այդ միջավայրում տեղի ունեցող գործառույթները` պետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների սահմանադրական–իրավական գործունեությունն ու փոխհարաբերությունները, հասարակական–քաղաքական կյանքում գերակա նշանակություն ունենալով հանդերձ, ոչ թե հասարակության քաղաքական համակարգի, այլ պետության ներհամակարգային կյանքի բաղադրատարրեր են: Այլ հարց է` երկրի սահմանադրական սկզբունքների և նորմերի հիմքով պետական իշխանության մարմինների, մասնավորապես օրենսդիր իշխանության` ոչ պետական հաստատություններին վերաբերող օրինաստեղծ գործունեությունը և այդ հիմքով պետական իշխանության այլ օղակների գործառնությունները, որոնք դուրս են գալիս ներպետական կյանքի շրջանակներից և դառնում քաղաքական համակարգին ներհատուկ միջավայրի ձևավորման ոլորտ:

Քաղաքագիտական գրականության մեջ այդ փաստի անտեսումը պատճառ է դառնում հասարակության քաղաքական համակարգի և պետության` որպես այդ համակարգի գլխավոր ինստիտուտի, իրական առնչությունների ոչ միշտ ճիշտ ըմբռնումների համար: Դա հատկապես դրսևորվում է նրանում, որ պետությունը նույնացվում է քաղաքական համակարգի հետ, պետության գործունեությունը` պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների կառուցվածքային փոփոխությունները և գործառնությունները, պառլամենտական կոալիցիաների կազմավորումն ու գործունեությունը դիտարկվում են որպես հասարակության քաղաքական համակարգին ներհատուկ երևույթներ: Մինչդեռ արտապառլամենտական կառույցների (հանձնաժողովներ, ներկայացուցչություններ, դիտորդական–փաստահավաք խմբեր, հետազոտական կառույցներ և այլն) ստեղծումը, որոնց մասնակից են դարձվում ոչ պետական հաստատությունների ներկայացուցիչներ, գործում են քաղաքական համակարգի տիրույթում: Այդպիսիների շարքում կարող ենք դասել Հայաստանում Քաղաքական խորհրդի կազմավորումը, 2008 թ. մարտի 1–2–ի դեպքերի ուսումնասիրման արտապառլամենտական հանձնաժողովի ստեղծումը, Հասարակական պալատի կազմավորումն ու գործունեությունը և այլն:

Ճիշտ նույնպես ներկուսակցական փոխհարաբերություններում առկա միջավայրը քաղաքական համակարգի միջավայր չի հանդիսանում: Մինչդեռ միջկուսակցական փոխհարաբերությունները, ոչ պառլամենտական կոալիցիաների ու միավորումների գործունեությունը, քաղաքացիական հասարակության այլ կազմավորումների և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ, կոլեկտիվ ձեռնարկումները հանդես են գալիս որպես ներքաղաքական համակարգային երևույթներ՝ իրենց ներհատուկ սոցիալական միջավայր/շրջապատով:

Քաղաքական համակարգի սոցիալ–քաղաքական միջավայր/շրջապատի գործոններ են ինչպես քաղաքական և ոչ քաղաքական, պետական և ոչ պետական հաստատություններն ու միավորումները, այնպես էլ զանազան օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի հանգամանքները՝ իրադարձությունները, գործընթացները, հարաբերությունները, մարդկանց մեծ ու փոքր խմբերի կացությունն ու սոցիալ–հոգեբանական իրավիճակները, տարաբնույթ հասարակական կարծիքներն ու տրամադրությունները: Դրանց՝ որպես քաղաքական համակարգի սոցիալական միջավայր/շրջապատի տարրերի գործառնությունները դրսևորվում են յուրահատուկ ազդանշանների ու տեղեկատվությունների ձևերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատուկ դերը, քաղաքական համակարգում կամ դրա առանձին օղակներում վերաբերմունք/գործողություն առաջ բերելու ռեսուրսներն ու նշանակությունը: Դրանք դրսևորվում են ինչպես մարդկանց, նրանց մեծ ու փոքր խմբերի, հաստատությունների, կազմակերպությունների ու միավորումների կամքի ակտիվ արտահայտմամբ (պահանջմունք, պահանջարկ, խնդրանք, առաջարկություն, ընդունած որոշումների և ձեռնարկումների նկատմամբ ակտիվ՝ պաշտպանողական կամ մերժողական բնույթի գործողություններ), այնպես էլ հանգամանքների, իրավիճակների, իրադարձությունների, գործընթացների, հարաբերությունների, տրամադրությունների, սոցիալ–քաղաքական կողմնորոշումների և հանրային կարծիքի ուսումնասիրման միջոցով ձեռք բերված տեղեկությունները:

Սոցիալ–քաղաքական և հոգևոր–մշակութային միջավայր/շրջապատի ազդանշանները (տեղեկությունները, փաստերը, վիճակագրական նյութերը, հետազոտությունների ամփոփումները, եզրահանգումներն ու առաջարկությունները) կարող են լինել գրավոր կամ բանավոր, պաշտոնական կամ ոչ պաշտոնական, անմիջական կամ միջնորդների միջոցով իրականացվող, կոնկրետ հասցեագրված կամ ընդհանրական բնույթի ազդանշան/տեղեկությունների ձևով: Ազդանշան/տեղեկությունների աղբյուրներ են հանդիսանում նաև հարցազրույցներում և հանդիպումներում արտահայտած մտքերը, զանազան բնույթի բանակցություններում տարբեր անձանց ու կառույցների դիրքորոշումները, առաջարկությունները, արտահայտած գաղափարները: Ազդանշան/տեղեկությունների աղբյուրներ են զանազան գործողությունները, արարքները, դեպքերը, իրադարձությունները, հասարակական–քաղաքական կյանքի տարբեր ոլորտներում կատարվող էական տեղաշարժերը, սոցիալ–քաղաքական ուժերի հարաբերակցության նկատելի փոփոխությունները և դրանց մասին հավաստի տեղեկությունները: Ուշադրության արժանի ազդանշանի/տեղեկությունների աղբյուր են դառնում նաև տնտեսական, քաղաքական, ռազմական, գիտական բնույթի գաղտնիքների ակամա կամ դիտավորյալ արտահոսքը, ապատեղեկատվությունը, փաստերի աղավաղումները և այլն:

Քաղաքական համակարգի սոցիալ–քաղաքական և հոգևոր–մշակութային միջավայր/շրջապատի այդ բազմազան ու բազմաբնույթ ազդանշանների ու տեղեկությունների ընդունումը, համակարգումը, արժևորումը, գնահատումը և համապատասխան ձեռնարկումներն իրականացվում են տարբեր մակարդակներում, տարբեր ինստիտուտների կողմից, տարբեր նորմատիվ և ոչ նորմատիվ ակտերի ու որոշումների հիմքով: Դրանք իրենց փոխպայմանավորվածությամբ և փոխադարձ կապերով հանդես են գալիս որպես հասարակության քաղաքական համակարգի կայացման, դրա տարբեր օղակների և ինստի-

տուտների կազմավորման ու գործառնությունների կանոնակարգման և կարգավորման միջոցների մի ամբողջություն:

Քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի դերի ու նշանակության վերաբերյալ հարցերի պարզաբանումը սերտորեն կապված է ինստիտուտների կազմավորման և գործառույթների կանոնակարգման ու կարգավորման մեխանիզմների վերլուծության հետ: Այդ հարցերում ճիշտ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է՝

1. հստակ պատկերացնել, թե ինչ են իրենցից ներկայացնում նորմատիվ հիմքերը, որոնք են դրանց կառուցվածքային տարրերը, և ինչպիսիք են դրանց առանձին խմբերի դերն ու նշանակությունը քաղաքական համակարգում,
2. հստակ տարբերակել նորմատիվ կանոնակարգման և կարգավորման երևույթների շարքը՝ ինստիտուտները, դրանց գործառույթներն ու փոխհարաբերությունները:

«Նորմատիվ հիմքեր» բառակապակցությունը բազմաբովանդակ է: Այն վերաբերում է ինչպես, բառի բուն իմաստով, սոցիալական նորմերին, որոնք ընդհանրական բնույթ ունեն, նախատեսվում են բազմակի կիրառման համար, վերաբերում են տվյալ դասի, շարքի բոլոր երևույթներին, այնպես էլ նորմատիվ բնույթ չունեցող որոշումներին՝ հրամաններին, կարգադրություններին, հստակ սահմանված ժամանակահատվածում, կոնկրետ անձանց կողմից որոշակի գործողություններ իրականացնելու լիազորություններին: Դրանք, փաստորեն, հանդես են գալիս որպես ընդունված նորմերի կոնկրետացման և անձնավորման միջոցով դրանց գործնական իրականացմանը միտված ձեռնարկումներ և նախատեսված չեն բազմակի կիրառման համար:

Հասարակական–քաղաքական կյանքի կանոնակարգման համակարգում կիրառվող տարաբնույթ միջոցները՝ նորմատիվ արժեք ունեցող և նորմատիվ արժեք չունեցող որոշումների դերն ու նշանակությունը նույնական չեն:

Նորմատիվ հիմքերը, որպես կանոն, ամրագրվում են իրավական, քաղաքական, կանոնադրական, կրոնական և կորպորատիվ բնույթի զանազան նորմատիվ ակտերում: Դրանք իրենց օբյեկտներով և կարգավորման գործառույթներով էապես տարբերվում են միմյանցից: Կարող ենք առանձնացնել նորմատիվ կարգավորման երկու խումբ՝ հիմքային արժեք ունեցող և հիմքային արժեք չունեցող նորմեր:

Հիմքային նորմերը վերաբերում են քաղաքական համակարգի օղակների՝ ինստիտուտների ու կառույցների կազմավորման, կարգավիճակների սահմանման, գործունեության ոլորտների հստակեցման, հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների որոշման, օրինականության շրջանակներում միջինստիտուտային և պետության հետ փոխհարաբերությունների սկզբունքներին: Այդ խնդիրները հիմնականում իրականացվում են պետության կողմից: Հիմքային նորմերը գերազանցապես իրավական բնույթ ունեն: Դրանք ամրագրվում են Սահմանադրություններում, օրենքներում և նորմատիվ իրավական այլ ակտերում: Հասարակության քաղաքական համակարգում պետության հիմնական գործառույթներից մեկն էլ հենց դա է: Սակայն պետությունը քաղաքական համակարգի տարրեր չի ստեղծում, այլ միայն ինստիտուտացնում է կազմավորվող հաստատությունները: Ժողովրդավարական երկրներում քաղաքական համակարգն ինքնակազմավորվող սոցիալական երևույթ է: Դրա կայացման գործընթացներում, իրավական նորմերից բացի, հիմքային արժեք ունեն նաև քաղաքական կուսակցությունների, կրոնական հաստատությունների, զանազան կազմակերպությունների ու միավորումների կանոնադրություններում, որոշումներում, նորմատիվ այլ ակտերում ամրագրված հիմնարար սկզբունքներն ու նորմերը, որոնց հիմքով սկսվում են դրանց՝ որպես ոչ պետական հաստատությունների կազմավորման գործընթացները: Քաղաքական և կորպորատիվ այլ հիմնարար նորմերը իրավական նորմերի հետ մեկտեղ հանդես են գալիս որպես քաղաքական համակարգի ոչ պետական հաստատությունների ու միավո-

րումների կազմավորման և գործառնությունների հիմքային գործոններ:

Քաղաքական համակարգի ինստիտուտների ու կառույցների գործունեության և փոխհարաբերությունների բազում դրսևորումներ, պայմանավորված նրանց կարգավիճակով, իրավասություններով ու լիազորություններով, կարգավորվում են հիմքային արժեք չունեցող իրավական, քաղաքական, բարոյական, կրոնական նորմերով, ավանդույթներով ու սովորույթներով: Դրանք կարգավորվում են նաև նորմատիվ բնույթ չունեցող զանազան որոշումներով, հրամաններով, կարգադրություններով և այլն:

Քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերը տարբեր քաղաքական վարչակարգերի պայմաններում դրսևորվում են տարբեր ձևերով: Որքան ամբողջատիրական, ավտորիտար է վարչակարգը, այնքան բացարձակ գերակայող է քաղաքական համակարգում հարաբերությունների իրավական կարգավորումը, որը շատ հաճախ սահմանափակում կամ բացառում է ոչ իրավական նորմերով հասարակական հարաբերությունների կարգավորումը: Այդպիսի դեպքերում օրինականությունը հանգեցվում է լոկ իրավականին, անտեսվում կամ սահմանափակվում են օրինականության շրջանակներում սոցիալական այլ նորմերով հասարակական հարաբերությունների լեգիտիմ կարգավորման հնարավորությունները: Դա կարող է դրսևորվել ինչպես քաղաքական համակարգի ինստիտուտների ներքին կյանքում, այնպես էլ քաղաքական համակարգին ներհատուկ փոխհարաբերությունների ոլորտում:

Կարող ենք տարբերել.

1. Սոցիալական նորմեր և ոչ նորմատիվ բնույթի որոշումներ, որոնք ստեղծվում են՝ անմիջականորեն հիմք ընդունելով սահմանադրական և այլ ակտերի որոշակի իրավական նորմերը.
2. Նորմեր և ոչ նորմատիվ բնույթի որոշումներ, որոնք չեն հակասում իրավական նորմերին, բայց ստեղծվում են ոչ թե այս կամ այն կոնկրետ օրենքների, նորմատիվ այլ իրավական ակտերի նորմերի հիմքով, այլ բնական իրավունքի՝ որպես համամարդկային հոգևոր արժեքի ոգուց ելնելով: Փաստորեն դա միաժամանակ հիմք է հանդիսանում անձնական իրավունքի նորմերի ձևավորման համար: Այս առումով որոշակի ճանաչողական և գործնական–կիրառական նշանակություն ունեն մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների հիմնական խմբերի տարբերակումը և համեմատական քննական վերլուծությունները:

Հասարակության քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի, մասնավորապես իրավական և օրինականության շրջանակներում ոչ իրավական միջոցներով սոցիալ–քաղաքական հարաբերությունների կարգավորման օրինաչափություններն ու մեխանիզմը ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ է ամփոփ ձևով ցույց տալ քաղաքական համակարգի տարբեր օղակների իրական դերակատարությունը այդ հարաբերությունների նորմատիվ և ոչ նորմատիվ կարգավորման գործընթացներում:

Քաղաքական համակարգի գլխավոր հաստատությունը պետությունն է: Դա դրսևորվում է ոչ միայն նրանով, որ հենց պետությունն է իրականացնում հասարակական կյանքի հիմնական բնագավառների կառավարման գործառույթները, այլև նրանով, որ պետությունը, ելնելով այն փաստից, որ երկրի Սահմանադրությունը, որպես հիմնական օրենք, բարձրագույն իրավական հիմք է հանդիսանում ոչ միայն պետության համար՝ նրա իրավաստեղծ գործառույթներում, այլև քաղաքական համակարգի մյուս բոլոր ինստիտուտների համար՝ նրանց նորմաստեղծ և ոչ նորմատիվ որոշումների ընդունման ու կիրառման բոլոր գործառույթներում, և հաշվի առնելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը, վավերացված, ընդունված ու ճանաչված, ինչպես նաև միջպետական պայմանագրերից, համաձայնություններից և տարածաշրջանային ու միջազգային կազմակերպություններին անդամակցելու կամ համագործակցելու հիմքով ստանձնած պարտավորությունները.

1. Ձևավորում է քաղաքական համակարգի իրավական դաշտը.
2. Որոշում է իրավակարգի և հասարակական կարգի հիմունքները.
3. Սահմանում է օրինականության բնույթը, մակարդակներն ու շրջանակները.
4. Սահմանում ու հաստատում է քաղաքական համակարգի ինստիտուտների իրավական կարգավիճակը, օրինականության շրջանակներում գործունեության ոլորտները, հիմնական իրավունքներն ու լիազորությունները, պետության և քաղաքական համակարգի այլ ինստիտուտների հետ փոխհարաբերությունների հիմունքները, այդ ոլորտներում հասարակական–քաղաքական հարաբերությունների իրավական կարգավորման հիմունքներն ու մեխանիզմը.
5. Պետությունը միաժամանակ օրենքներում և նորմատիվ իրավական այլ ակտերում ամրագրում է քաղաքական համակարգի այլ ինստիտուտներին և նրանց փոխհարաբերություններին վերաբերող իրավական նորմեր, որոնք, ըստ կարգի, չպետք է խաթարեն կամ սահմանափակեն այդ ինստիտուտների սահմանադրական իրավունքներն ու ազատությունները:

Ժողովրդավարական վարչակարգերում պետությունը, որպես կանոն, չպետք է խառնվի քաղաքական համակարգի ոչ պետական հաստատությունների ներքին կյանքին: Սակայն քիչ չեն այն դեպքերը, երբ պետության առանձին հաստատություններ ու կառույցներ գերազանցում են իրենց լիազորությունները, ընդունում և կիրառում են այնպիսի իրավական նորմեր և ոչ նորմատիվ բնույթի որոշումներ, որոնք դուրս են գալիս նրանց իրավասությունների և գործունեության տիրույթի շրջանակներից:

Քաղաքական համակարգի նորմատիվ հիմքերի էությունն ու հասարակական հարաբերությունների կարգավորման մեխանիզմը ճիշտ հասկանալու համար կարևոր նշանակություն ունի համակարգի իրավասուբյեկտիվության վերաբերյալ հիմնահարցի իմաստավորումը, քանզի տարբեր հայեցակարգերում առաջ քաշված ոչ ճիշտ պատկերացումներն էապես դժվարացնում և նույնիսկ խոչընդոտում են քաղաքական համակարգի նորմատիվ կարգավորման օրինաչափությունների հստակ ըմբռնմանը:

Հասարակության քաղաքական համակարգը՝ որպես միասնական ամբողջություն, իրավասուբյեկտիվություն ունեցող կազմավորում չէ, ինչպիսին համակարգի առանձին ինստիտուտներն ու հաստատություններն են: Այն չունի կարգավիճակ, իրավունքներ և լիազորություններ, չի ընդունում որոշումներ և չի կարող հանդես գալ որպես պատասխանատու իրավական անձ: Այդպիսի իրավասուբյեկտիվությամբ օժտված են միայն համակարգի ինստիտուտներն ու հաստատությունները՝ այն էլ իրենց իրավական կարգավիճակի և լիազորությունների սահմաններում: Այդպիսի իրավասուբյեկտիվությամբ օժտվում են նաև քաղաքական համակարգի շրջանակներում ձևավորվող միավորումները, կոալիցիոն խմբավորումներն ու միությունները: Նրանց կարգավիճակը, իրավունքները և համագործակցության ոլորտները որոշվում են օրինականության շրջանակներում՝ Սահմանադրության, նորմատիվ իրավական այլ ակտերի և իրենց ընդունած կորպորատիվ նորմերի ու նորմատիվ բնույթ չկրող որոշումների հիմքով:

Այսպես, Դոնի Բանակային կառավարության նոյեմբերի 11–ի (24) նիստում Վ. Խառլամովը առաջարկում էր վերահսկողություն սահմանել քարածխի պաշարների բաշխման և վաճառքի վրա: Դա փաստացի նշանակում էր Դոնից քարածխի արտահանման արգելք, այլ խոսքով՝ տնտեսական պատժամիջոցներ Խորհրդային կառավարության դեմ: Այս կապակցությամբ, Թիֆլիսում ԱՄՆ հյուպատոս Ֆ. Սմի-

թի կողմից պետդեպարտամենտին հղված նոյեմբերի 28–ի (դեկտեմբերի 11) հաղորդագրությունը հայտնում էր, որ Հարավարևելյան միությունը բոլշևիկների դեմ ուժերի միավորման նպատակով բանակցություններ է վարում նաև Ուրալի կազակների, ուկրաինական կենտրոնական Ռադայի, 1–ին լեհական լեգիոներների կորպուսի հրամանատար, գեներալ Յու. Դովբոր–Մուսնիցկիի, «Սիբիրի հետ»[12]:

Հարավարևելյան միության նպատակներն էին. 1. Ռուսաստանյան դեմոկրատական դաշնային հանրապետության շտապ հիմնումը. ճանաչվում էին նրա առանձին նահանգների կողմից միության բոլոր անդամները, 2. այլ ժողովուրդների և շրջանների աջակցությանը հասնելը, որոնց նպատակը ևս դաշնային հիմքի վրա Ռուսաստանյան պետության կառուցումն է. 3. դեմոկրատական ամուր իշխանության հաստատումը: Ռուսաստանյան պետության ամբողջականության պահպանման, տրոհված մասերի հավաքման ճանապարհով նրա հզորությունը վերականգնելու նպատակով Միությունն անհրաժեշտ էր համարում առանձին պետական միավորների ստեղծումը, որոնք, ամրացնելով ծայրագավառները, կամրապնդեին և կենտրոնը: Հարավարևելյան միությունը չէր հետապնդում անջատողականության գաղափարներ, միութենական կառավարությունների անջատում պետական ամբողջից՝ հավասարապես չունենալով նաև միապետության վերականգնման նպատակներ: Միությունը նպատակ էր դնում՝ պայքարելու արտաքին թշնամու դեմ և պատվավոր դաշինք կնքելու, պաշտպանելու ներքին կարգը, խաղաղությունը՝ որպես ինքնապահպանման հիմքեր: Միության առանձին անդամներին տրամադրվում էր ներքին կառավարման լիակատար անկախություն: Միությունը նպատակ ուներ համաձայնություն հաստատելու Ուկրաինայի, Անդրկովկասի, Սիբիրի հետ, բայց որպես մոտակա հարևան՝ առաջնությունը տալիս էր Անդրկովկասին: Բանվորական և զինվորական պատգամավորների խորհուրդները (այսուհետև տե՛ս բ.գ.պ. խորհուրդներ) շարունակելու էին գործել, բայց ոչ որպես իշխանության կամ էլ հեղափոխական վերահսկողության մարմիններ, այլ որպես հասարակական կազմակերպություններ: Հարավարևելյան միության կազմի մեջ մտնող առանձին կառավարությունների փոխադարձ համաձայնագիրը հավերժ չէր, նրա հատուկ նպատակն էր պայքար մղել ավերածության, անարխիայի դեմ և Ռուսաստանյան պետության հզորության վերականգնման համար: Համառուսաստանյան հանրապետական կառավարման կարգի հաստատման հետ մեկտեղ, Հարավարևելյան միությունը մտնում էր Ռուսաստանյան հանրապետության կազմի մեջ, բայց ոչ իր այժմյան կառույցի տեսքով, այլ որպես առանձին կանտոն[13]:

Կոմիսարիատի նախագահ Ե. Գեգեչկորին գտնում էր, որ թեև երկու կառավարությունների միջև առկա են համաձայնության գալու բոլոր օբյեկտիվ պայմանները, սակայն դեռևս վաղ էր համարում քննարկել հնարավոր համաձայնության ձևերի հարցը, մանավանդ որ օրակարգում Թերեքի և Կուբանի կառավարությունների հետ մի քանի կարևոր հարցերի շուրջ համաձայնության գալու խնդիրն էր շոշափվել: Կարծիք հայտնվեց նաև, որ իրենց մեծամասնության մեջ կազակները չունեն սոցիալիստական տրամադրություններ և, միաժամանակ, մոնարխիստներ չեն: Մասնավորապես, Ա. Կալեդինը կասկածից դուրս էր հակահեղափոխությանը պատկանելու հարցում: «Դոնից նա չի հեռացել,– ասվում էր նիստում,– չի ճնշել ոչ մի շարժում, Կոռնիլովի օգտին ագիտացիա չի վարել»[14]:

Կոմիսարիատի նոյեմբերի 30–ի (դեկտեմբերի 13) նիստում, լսելով Հարավարևելյան միության հետ միավորվելու հարցը, Ե. Գեգեչկորին հայտարարում է, որ, ելնելով ներկա քաղաքական իրավիճակից, Հարավարևելյան միության հետ Անդրկովկասի անդամակցության խնդիրն առայժմ լուծվում է բացասաբար: Նա միաժամանակ նշում էր, որ Անդրկովկասի նպատակներն ընդհանուր առմամբ համընկնում են Հարավարևելյան միության հարցադրումների հետ: Գլխավոր նպատակը՝ նորաստեղծ ինքնուրույն պետական կազմավորումների հետ միավորման ճանապարհով Ռուսաստանյան պետության հզորության վերականգնումը, ընդունելի էր: Արդարացված էր նաև Միության առանձին

միավորների ներքին ղեկավարման հարցերում լիակատար ինքնավարության պայմանը: Սակայն, ըստ Ե. Գեգեչկորիի, ընդհանուր քաղաքական պայմանները թեև ժամանակավորապես, բայց միևնույնն է, իշխում են և Անդրկովկասում, ուստի առանձին հարցերի շուրջ համաձայնությունը անհետաձգելի էր համարվում և անհրաժեշտ, սակայն առանց Միության կազմում Անդրկովկասի փաստացի ներգրավման[15]:

Այս տեսանկյունից և բոլորովին ուրիշ նախապայմանների առկայության շեշտադրմամբ է հանդես գալիս Ա. Չխենկելին (ներքին գործերի նախարարության գծով կոմիսար): Նա բարձրացնում է վրացական ազգային շրջանակների գլխավոր մտահոգությունը՝ երկրամասում Կովկասյան բանակի զորամասերի ոչ ցանկալի ներկայության խնդիրը: «Անդրկովկասի թիկունքում կանգնած է հսկայական, կեսմիլիոնանոց բանակը,– նշում էր նա,– որը, բոլշևիզմի գաղափարներով վարակված, ոչ այնքան բարեկամաբար է տրամադրված Անդրկովկասին»[16]: Մյուս ժողովուրդների ազգային շահերի իրավունքն ու պատասխանատվությունն իր և վրացական մենշևիզմի լիազորությունը դարձնելով՝ Ա. Չխենկելին այդ ուժի մեջ էր տեսնում երկրամասում իշխանության այլընտրանքի, Կոմիսարիատի գոյության հարցը: Նա գտնում էր, որ ազգային զորամասերը կազմակերպված չեն, իրական ուժ չեն ներկայացնում, որի վրա կարող է հենվել երկրամասի իշխանությունը[17]: Այս հարցում ևս արհեստական հավասարության նշան էր դրվում, այն դեպքում, երբ վրացական գործիչներին հայտնի էր, որ հայկական ազգային զորամասերը բավարար կազմակերպված են, և որ օրակարգի հարցը Հայկական կորպուսի ստեղծման ավարտական փուլն էր: Ավելին՝ ազգային զորամասերի կազմավորման գործընթացի նկատմամբ Անդրկովկասի բոլշևիկյան ղեկավարների բացասական վերաբերմունքը Ա. Չխենկելին հմտորեն վերաձևում էր երկրամասի ժողովուրդների նկատմամբ ռուս ազգի, ռուսական տարրի թշնամական պահվածքի որակավորմանը՝ մեկ անգամ ևս հիմնավորելով Ռուսաստանից անջատման արդարացիությունը:

Ասվածի լավագույն ապացույցներից է այն հանգամանքը, որ մենշևիզմի առաջնորդներից մեկն այդ հարցում մեղադրանք էր ներկայացնում Կովկասյան բանակի սպաների, գիտակից զինվորների հանդեպ, որոնք ներկայացնում էին ս.–դ. և էսէռական կուսակցությունները և ածանցյալ ձևով խոչընդոտում էին ազգային զորամասերի ձևավորումը: Ա. Չխենկելին պարզապես չէր ուզում ընդունել, որ բացի բոլշևիզմի վտանգից և Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստատելու վախից, ռուսական այդ զորամասերի ներկայությունը նաև ռուսաստանյան միասնական պետության ամբողջության պահպանման գրավականն էր՝ լիներ դա ժողովրդավարության կամ բոլշևիզմի դրոշի ներքո: Այդ նկատի ուներ գեներալ Ա. Դենիկինը՝ նշելով, որ «Արտաքինից ամեն ինչ բարեհաջող էր թվում. Կիևը, Նովոչերկասկը, Եկատերինոդարը, Թիֆլիսը խոսում էին համադաշնության և կենտրոնական կառավարության կոալիցիոն կազմի մասին: Բայց գործնականում այլ պատկեր էր ստացվում… Թիֆլիսը պահանջ էր ներկայացնում Կովկասյան ռազմաճակատի համապետական ահռելի միջոցների վրա»[18]:

Հարավարևելյան միության հետ դաշինքի հիմքում նա դնում էր Անդրկովկասի տարբեր ազգերի միջև նախնական համաձայնության սկզբունքը՝ կանխավ հասկացնելով, որ վրացական կողմը դեմ է այդ միությանը, քանի որ այն դարձյալ վերադարձ էր կանխորոշում դեպի միասնական համառուսական ընտանիքը:

Հ. Օհանջանյանը միանում է Ա. Չխենկելիի գնահատականներին և նշում, որ Հարավարևելյան միության հետ համաձայնությունը լայն արձագանք է գտել հայկական դեմոկրատիայի շրջանում: Նա առանձնացնում էր պարենային և բանակի զորացրման հարցերի շուրջ համաձայնության, նույնիսկ միության ստեղծման խնդիրը[19]:

Երկրամասի մի փոքր անկյունում՝ Սուխումի օկրուգում աբխազները ևս ցանկություն էին հայտնում վրացի բնակչության հետ միասին անդամագրվելու Հարավարևելյան միությանը[20]: 1918 թ. հունվարի 4–ին (17) Անդրկովկասյան կոմիսարիատը Եկատերի-

նողարից հրավեր է ստանում՝ Ռոստովում հունվարի 25–ին (փետրվարի 7) հրավիրվող համագումարին մասնակցելու կապակցությամբ: Համագումարում պետք է քննարկվեին Հարավարևելյան միության և Անդրկովկասի քաղաքական, տնտեսական և ֆինանսական միավորման հետ կապված հարցերը[21]:

Այսպիսով՝ հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո՝ 1917 թ. նոյեմբեր – 1918 թ. հունվար ժամանակահատվածում, հակախորհրդային այլ պետական կազմավորումների շարքում Հարավարևելյան միությունը հանդես եկավ միասնական հակաբոլշևիկյան դաշինքի ձևավորման նախաձեռնությամբ և համապատասխան առաջարկով դիմեց Անդրկովկասյան Կոմիսարիատին:

Այդ համագործակցության գործընթացը դարձավ «միացյալ, անբաժան Ռուսաստան» կարգախոսի և նրա հետևորդների հավատարմության ու հետևողականության ստուգման կարևորագույն փորձաքարը: Սկզբից ևեթ ի հայտ եկավ վրացական մենշևիզմի և ՀՀԴ միջև ընթացող առայժմ ոչ բացահայտ անհամաձայնությունը:

Թեև ընդհանուր հակառակորդի՝ բոլշևիզմի դեմ պայքարում վրացական դիրքորոշումը ենթադրում էր հակախորհրդային հզոր խմբավորման հետ համաձայնության կայացում, սակայն ազգային–տարածքային տարանջատման առաջնային խնդիրը բնեռային հակասություն էր առաջացնում միավորման հարցում, այն էլ հակառուսական տրամադրությունների պարագայում: Ռուսական, պետականամետ ռազմաքաղաքական ուժերի հետ կայուն դաշինքն առավելապես բխում էր հայ իրականության շահերից, քանի որ, նախ՝ բացահայտ չէր բարձրացվում ազգային ինքնիշխանության մերժման խնդիրը, ապա և Արևմտյան Հայաստանում դեռ կանգնած Կովկասյան բանակի զորամասերի ներկայությունը երաշխավորվում էր նաև ռուսաստանյան կենտրոնամետ ուժերի միջոցով Հայկական հարցի բարենպաստ լուծումը: Այլ կերպ ասած՝ հայությանը ձեռնտու էր ռուսական ներկայությունը Անդրկովկասում և գրավյալ Արևմտյան Հայաստանում, անգամ բոլշևիզմի տեսքով, իսկ վրաց–թաթարական դաշինքի համար այդ ներկայությունը գլխավոր խոչընդոտն էր Ռուսաստանից հեռանալու և նոր դաշնակիցների աջակցությամբ անկախության ու այդպես նաև տարածքային ձեռքբերումների ճանապարհին: Այս մարտավարությունը ՀՀԴ կողմից դրսևորվեց երկու անգամ՝ 1918 թ. մարտին և սեպտեմբերին, երբ ուշացած փորձ արվեց Ստ. Շահումյանի և հայանպաստ Բաքվի կոմունայի ուժերով իրականացնելու հեռահար ազգային ծրագիրը:

Այժմ, սակայն, Դաշնակցության գերակշիռ և ազդեցիկ զանգվածը ենթարկվում էր վրացական մենշևիկների որդեգրած քաղաքական ուղուն:

Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Անդրկովկասի կյանքի բոլոր բնագավառները պտտվում էին մեկ առանցքի՝ Կովկասյան ռազմաճակատի տարաբնույթ հիմնահարցերի շուրջը: Սկիզբ էր դրվում բարդ, իրադարձություններով հագեցած մի գործընթացի, որն ընդգրկում էր Երզնկայի զինադադարից մինչև Բաթումի հաշտության պայմանագրի փուլը:

Ռուսաստանից անջատ գործելու առաջին գործնական քայլը տեղի ունեցավ Կոմիսարիատի ձևավորումից և հայտարարության հրապարակումից երկու օր անց: Կովկասյան ռազմաճակատի թուրքական հրամանատարությունը նոյեմբերի 17–ին (30) հանդես էր եկել զինադադարի առաջարկությամբ՝ «հանուն մարդասիրության եղբայրասպան պատերազմին վերջ տալու նպատակով»[22]:

Զինադադարը Թուրքիային անհրաժեշտ էր Իրանում, Միջագետքում և Պաղեստինում վերջինիս բանակների ծանր դրության պատճառով: Բացի այդ, Կովկասյան ռազմաճակատի ուղղությամբ թուրքական բանակը չուներ բավարար ուժեր դեպի Կովկաս արշավանք կազմակերպելու համար, ուստի և ուժերի կենտրոնացման համար կենսական ժամանակ էր շահում:

Զինադադարի մասին հայտարարությամբ, Անդրկովկասյան կոմիսարիատի նոյեմբերի 21–ի (դեկտեմբերի 4) նիստում հանդես եկավ ռազմաճակատի գլխավոր հրամա-

նատար, գեներալ Մ. Պրժևալսկին՝ հայտնելով, որ Կովկասյան ռազմաճակատի թուրքական բանակի հրամանատար Ֆերիք–Վեհիբ Մահմեդ փաշայից ստացվել է զինադադարի կնքման վերաբերյալ նամակ–առաջարկություն:[23] Որոշվեց, նկատի ունենալով Ռուսաստանում միասնական, կենտրոնական և բոլորի կողմից ճանաչված կառավարության բացակայությունը և այն, որ Գերագույն գլխավոր հրամանատարի շտաբը վերացված է քաղաքացիական պատերազմի հետևանքով, ինչպես նաև հաշվի առնելով Ռուսաստանի ընդհանուր քաղաքական իրադրությունը, կոմիսարիատն ընդունում է, որ պետք է ընդառաջ գնալ թուրքական հրամանատարության առաջարկին և առաջարկել նրան անհապաղ դադարեցնել ռազմական գործողություններն ամբողջ Կովկասյան ռազմաճակատում՝ պայման ընդունելով, որ թուրքական կողմը չիրականացնի ոչ մի ռազմավարական վերախմբավորում, որոնք կվտանգեն Միջագետքի Անգլիական բանակին[24]:

Նույն օրը կոմիսարիատի վճիռը քննարկում է բ.ք.գ. պատգամավորների խորհրդի երկրամասային կենտրոնի արտակարգ նիստը, որը Ն. Ժորդանիայի նախագահությամբ հավանություն է տալիս զինադադարի որոշմանը: Ե. Գեգեչկորին տեղեկացնում էր, որ կոմիսարիատը միաձայն քվեարկել է այդ առաջարկի օգտին և զգուշորեն հարցնում էր կենտրոնի կարծիքը՝ այն առումով, որ եթե վերջինս հավանություն չտա, ապա կոմիսարիատը վայր կդնի իր լիազորությունները[24]: Ցուցադրվող ժողովրդավարական խաբկանքի ենթատեքստում, շեշտելով նաև ազգերի ներկայացուցիչների ակտիվ մասնակցության հանգամանքը, պարզապես անցկացվում էր հաղթած որոշումը, և երկրամասային իշխանության մի մարմնի ղեկավար, վրաց մենշևիկ Ե. Գեգեչկորին ստանում էր մյուսի՝ Ն. Ժորդանիայի հավանությունը: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 22–ին (դեկտեմբերի 5), Կովկասյան բանակի հրամանատարությունը Էրզրում՝ թուրքական բանակի հրամանատարին է ուղարկում զինադադարի վերաբերյալ պատասխանը: Այստեղ ավելացվում էր միայն այն, որպեսզի թուրքական և ռուսական բանակների ներկայացուցիչներից ձևավորվի հստակ հանձնաժողով, որը կմշակի զինադադարի ընդունելի պայմանները[25]: Նույն օրը, գեներալ Մ. Պրժևալսկին և Ե. Լեբեդինսկին ստորագրեցին ևս երկու փաստաթղթեր: Առաջինում՝ Անգլիական Միջագետքի բանակի՝ Բաղդադում գտնվող հրամանատարին ուղղված հեռագրում, մեր ուշադրությունը գրավեց այն, որ Մ. Պրժևալսկին՝ որպես զինվորական գործիչ, իր անգլիական գործընկերոջը՝ Անդրկովկասյան կոմիսարիատը, ներկայացնում էր որպես «Անդրկովկասի ժամանակավոր կառավարություն»՝ դրանով հուսադրելով նրան ռազմաճակատում ռուսական Կովկասյան դեռևս դաշնակից բանակի ներկայության հարցում[26]:

Երկրորդ փաստաթղթի մեջ՝ «Անդրկովկասյան կոմիսարիատի ուղերձը բանակին և Կովկասի ազգաբնակչությանը»[27], առկա են բացահայտ հակասական հիմնադրույթներ: Ելակետ ընդունելով այն սկզբունքը, որ զինադադարի ընթացքում կիրավիրվի Համառուսաստանյան Սահմանադիր ժողովը, որը և կմշակի հաշտության պայմանները, Անդրկովկասյան կոմիսարիատի ղեկավարությունն ընդգծում էր այն հանգամանքը, որ վերցնելով իշխանությունն իր ձեռքը՝ նա խոստացել էր, թե «կովկասյան բանակը ոչ մի ավելորդ օր չի կռվի և կպահպանի Ռուսաստանյան ռազմաճակատի հետ միասնությունը»: «Պատերազմն է ծնել հեղափոխությունը,– ասվում էր կոչում,– մեծ հեղափոխությունն էլ կվերացնի պատերազմը»[28]: Հակասությունը նախ նրանում է, որ երկրամասի «դեմոկրատական» կառավարությունը տվյալ դեպքում հանդես էր գալիս բոլշևիկյան կարգախոսով, այլապես ի՞նչ է նշանակում «չկռվել ոչ մի օր», երբ Ռուսաստանյան դեմոկրատական Ժամանակավոր կառավարության կարգախոսն էր. «Պատերազմ մինչև հաղթական ավարտը», որն ինքնին նաև Կոմիսարիատի կողմից բոլշևիզմի դեմ պայքարի գլխավոր միջոց ու երաշխիք էր դիտարկվում: Թիֆլիսի կադետների առաջնորդ Ի. Սեմյոնովը և կուսակցության «Народная свобода» թերթը գտնում էին, որ Անդրկովկասի կոմիսարիատն իրագործում էր «Լենինի և Տրոցկու ծրագիրը»: Հաշտությունը համարելով դավաճանություն՝ թերթը գրում էր. «Ինչու՞ բոլշևիկներն իրենք կատարեն այդ սև գործը, քանի դեռ Ռուսաս-

տանի հանձնարարությամբ նրանց փոխարեն այդ դավաճանությունը կարող են անել մենշևիկները, էսէռներն ու դաշնակցականները»[29]:

Այս տեսակետը կիսում էր նաև զորավար Անդրանիկի անկուսակցական «Հայաստան» թերթը: «Կովկասեան կոմիսարիատը,– գրում էր թերթը,– որ ամեն կերպ կաշխատի առաջն առնել պոլշևիկական շարժումի մը և կամ բոլորովին չենթարկուիլ Լենինի կառավարութեան, այսու ամենայնիւ իր յայտարարութիւններով և մասնաւորապէս վերջերս զինադադար և հաշտութեան խնդիրներու վերաբերմամբ կարծես ոչ մէկ տարբերութիւն ունի պոլշևիկներու տեսակէտներէն: Զինադադարի խնդրին մէջ Կովկասեան Քոմիսարիաթը, Բեթրոկրատի ժող. կոմիսարներու կառավարութենէն աւելի փութկոտութիւն մը ցոյց տուաւ Կովկասեան ֆրոնտի վրայ»[30]: «Կովկասեան Քոմիսարիաթը թէպէտև չենթարկուեցաւ պոլշևիկներուն,– գրում էր թերթը 1918 թ.,– բայց բաժնեց անոնց շատ մը գաղափարներն ու գործունէութիւնը»[31]:

Երկրորդ՝ Կոմիսարիատի ղեկավարությունը չէր ուզում ընդունել, որ Կովկասյան բանակի զորամասերի գերակշիռ մասը 1917 թ. դեկտեմբերին արդեն բոլշևիկացել և սկսել էր դասալքել ռազմաճակատը: Հարց է առաջանում՝ խաղաղություն և հող ստացող զինվորը ինչպես պետք է վերջ տար պատերազմին, եթե ոչ անջատ, բոլշևիկյան հաշտությամբ: Երրորդ՝ թերևս անբացատրելի է Կոմիսարիատի հարցադրումն այն մասին, որ Կովկասյան բանակը համառուսաստանյան ռազմաճակատի հետ միշտ կպահպանի միասնություն: Քաղաքացիական պատերազմի պայմաններում այդ ո՞ր ռազմաճակատի կամ ո՞ր բանակի մասին էր խոսքը գնում, մի՞թե դարձյալ Կովկասյան բանակի բոլշևիկացող զորամասերի, որոնք վերադառնում էին Ռուսաստան՝ համալրելու Կարմիր բանակի շարքերը:

Եվ վերջապես, ինչո՞վ է հիմնավորված Կոմիսարիատի ղեկավարության կազմում դաշնակցական կոմիսարների անվերապահ համաձայնությունն այս հարցում: Ռազմաճակատը, որտեղ այլևս «ոչ մի կռիվ չէր լինելու», ընդգրկում էր Արևմտյան Հայաստանի մեծ մասը, իսկ սկսված Բրեստ–Լիտովսկի բանակցությունները ոչ մի հայանպաստ որոշում հեռանկարում չէին ուրվագծում:

Դաշնակցական Ար. Ջամալյանը պարտվողական դիրքերից պատասխանում և հիմնավորում էր ասվածը. «Թուրքերի առաջարկը լուրջ քաղաքական մտավախություն էր պատճառում հայ ժողովրդին, որը զգում էր թշնամու հետ առանձին հարաբերությունների մեջ մտնելու վտանգը: Սակայն Անդրկովկասի կոմիսարիատը որոշեց զինադադար կնքել, և մենք համակերպվեցինք նրան, այն միտումով, թե անհրաժեշտ է հարևան ժողովուրդների հետ ընթանալ»[32]:

Զինադադարի առաջարկության ընդունման մասին լուրը կոմիսար Խ. Կարճիկյանը հայտնում է Երևանի նահանգային գործադիր կոմիտեի նախագահ Ս. Թորոսյանին. «Շուտով կը որոշուեն զինադադարի պայմանները. կարող է որոշուել երկրի բախտը. անհրաժեշտ է շուտափոյթ, բայց և պատասխանատու որոշումներ ընդունել. անհրաժեշտ է ներկայութիւնը բիւրոյի բոլոր անդամների, բոլոր պատասխանատու ընկերների և կենտրոնականի ներկայացուցիչների՝ արտակարգ կոնֆերանսի համար»: Ուղիղ հեռագրակապով նրան պատասխանում են Դրոն, Արամը, Ս. Թորոսյանը՝ վստահեցնելով, որ «սահմանները յամենայն դէպս ի վնաս մեզ չեն փոփոխվի»[33]:

«Զանգ» թերթի նույն համարի խմբագրականը մերժում էր այս լավատեսական հեռանկարը. «Այժմ որտե՞ղ պետք է մնայ խելագար բոլշևիկների «ազգերի ինքնորոշման» սկզբունքը… ի՞նչ հայրենիքի վերականգնում, երբ ինքը՝ հսկայ Ռուսաստանը, գերի է գնում Գերմանիա»[34]:

Փաստորեն, Անդրկովկասի կոմիսարիատը ռազմաճակատի հրամանատարության հետ միասին, իրականացնում էր բոլշևիկների նախաձեռնությամբ գերմանական խմբավորման հետ զինադադարի և անջատ բանակցությունների գործընթացը՝ այն պարզապես տարածելով Կովկասյան ռազմաճակատի վրա և հարմարեցնելով երկրամասի

ռազմաքաղաքական իրադրությանը: «Պարտված Ռուսաստանը Պետրոգրադի ժողկոմխորհի և Անդրկովկասեան կոմիսարիատի անուններով դիմեց պատերազմող պետութիւններին,– գրում էր «Վան – Տոսպը»,– եռամսեայ զինադադարի առաջարկով»[35]:

Այս առումով, մեր պատմագրության կողմից անտեսվել է մի շատ կարևոր հանգամանք, ինչը որոշակիորեն պարզաբանում է մտցնում Կոմիսարիատի և նրա մենշևիկյան ղեկավարության ինքնակամ և անհեռատես ռազմավարության ընտրության հարցում:

Խնդիրը նրանում է, որ նոյեմբերի 23–ին (դեկտեմբերի 6) Կոմիսարիատի նիստը քննում է դաշնակից պետությունների հյուպատոսների հրատարակած բողոքը: Այնտեղ զայրույթ էր հայտնվում այն մասին, որ առանց դաշնակից կառավարությունների իրազեկության, Կովկասյան ռազմաճակատում Թուրքական բանակի հետ զինադադարի պայմաններ են մշակվում: Զավեշտալի է, բայց կոմիսարիատի նիստը որոշում է այդ բողոքն «ընդունել ի գիտություն»[36]:

Ազդեցիկ հայկական քաղաքական կուսակցություններն ու հոսանքները զինադադարի և հաշտության առաջարկի վերաբերյալ անմիջապես հայտնեցին իրենց ոչ միանշանակ վերաբերմունքը:

Թիֆլիսում գումարվում է ՀՀԴ արտակարգ խորհրդակցություն: Դաշնակցության մամուլի բազմաթիվ հրապարակումները վկայում են, որ կուսակցությունը, նրա ղեկավարությունը հիմնականում տարաձայնություններ չունեին Կոմիսարիատի և նրա դաշնակցական կոմիսարների որոշումների հետ, լիովին համակերպվել էին անջատ հաշտության մասին բոլշևիկյան մարտավարությանը:

«Բոլշևիկները ապստամբութիւնը ակներև դարձրեց միանգամայն,– գրում էր «Աշխատանքի դրոշակ»–ը,– որ երկիրը այլեւս կռուել չի կարող, որ հաշտութիւնը ոչ միայն պետութեան ստիպողական պահանջն է, այլև նրա գոյութեան իսկ պայմանը»[37]: Միաժամանակ, զինադադարի ստորագրումից հետո, առկա է նաև ՀՀԴ մի վճռական հատվածի, տվյալ դեպքում «Հորիզոնի» մոտեցումը, որը կատարվածից հետո միայն ահազանգում էր, թե «Վէրին աստիճանի խանգարուած մտքի տէր պէտք է լինել այս բանը չնկատելու համար, և, դժբախտաբար, մենք այդ չէնք նկատում, կամ աւելի ճիշտ թուլամորթորեն փակում ենք մէր աչքէրը գալիք ահաւոր վտանգի առջեւ: Մէր հեղափոխական կազմակերպութիւնները կլանուած են ներքին ցաւերով: Մեր ազգային հաստատութիւնները անձնատուր են եղած համեմատաբար երկրորդ հերթին լուծելիք հարցերով»[38]:

«Գալիք ահավոր վտանգ» ասելով՝ ՀՀԴ գործիչները նկատի ունեին թուրքական անխուսափելի արշավանքը և ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի որոշ տարածքների կորուստը:

Բրեստ–Լիտովսկի բանակցություններից նրանց հայտնի էր դարձել, որ թուրքերը որպես հաշտության պայման պահանջելու են նաև Կարսը, Ալեքսանդրապոլը, Արդահանը: Ցավալի է, բայց Դաշնակցությունը դեռ վստահ էր այն հարցում, որ Ռուսաստանը չի համաձայնվի. «Անհաւանական չէ, որ Էնվէր–թալեաթեան կառաւարութիւնը առաջ քաշի այսպիսի պայման, և որովհետեւ պարզ է, որ Ռուսաստանը չի կարող համաձայնել, ուստի կռուի առիթը պատրաստ կը լինի»[39]: Ստացվում է, որ Բրեստի բոլշևիկյան քաղաքականությունը դաշնակցության համար դեռևս լիովին պարզ չէր, չնայած զուգահեռ և շատ նպատակամղված տարվում էր հայկական զորքի զորակոչի աշխատանքը:

Անդրկովկասյան կոմիսարիատի անջատ հաշտության կնքման նկատմամբ արմատական ընդդիմադիր կեցվածք որդեգրեց Հայ ժողովրդական կուսակցությունը: Դա բացատրվում է ոչ միայն և ոչ այնքան երկրամասային իշխանության կազմում կուսակցությունը չընդգրկելու և Դաշնակցության հանդեպ ունեցած փոխադարձ անհանդուրժողականության մեկնակետով, որքան տվյալ պահին առավել կշռադատված, սթափ և համազգային շահով մտահոգվելու հանգամանքով: Նոյեմբերի վերջից «Մշակ»–ը հեղեղվում է բախտորոշ վճիռը քննարկող և վերլուծող հոդվածներով: Այդ շարքում առանձնանում է թերթի խմբագիր

և ՀԺԿ գաղափարախոս Հ. Առաքելյանի «Ինչ է լինելու Հայաստանի ապագան» հոդվածաշարը[40]: Ի դեմս հեղինակի՝ ՀԺԿ հարցադրումները հանգում էին հետևյալին:

Հայ ժողովրդական կուսակցությունը լիովին նույնացնում էր բոլշևիկյան կառավարության և Կոմիսարիատի անջատ հաշտության վերաբերյալ մարտավարությունը՝ իսկապես չհասկանալով և չհավատալով քաղաքական հակադիր բևեռներում կանգնած կառավարությունների և կուսակցությունների գործելակերպի նմանությունը: «Երևի դա ևս որոշ տակտիկա է,– գրում էր նա,– չը ճանաչել պաշտօնապէս, de jure, բօլշեւիկների իշխանութիւնը, բայց իրողապէս, de facto, իրագործել նրանց ծրագիրները»[41]: Հայ ժողովրդի երկու հատվածների համար անջատ հաշտությունը միանշանակ դիտվում էր որպես հայ ազգի, *Հայաստանի* հասկացության և Հայկական հարցի կործանում:

Որպես հավանական մոտակա հետևանքներ էին դիտարկվում Կովկասյան ռազմաճակատի մերկացման գործընթացի վերջնական ավարտը, դրա հետևանքով թուրքական անխուսափելի արշավանքը, 40 հազար զինված քրդերի աջակցությունն այդ հարցում, այն, որ «հաշտություն առանց անեքսիայի և ռազմատուգանքների» կարգախոսը ենթադրելու էր Արևմտյան Հայաստանի վերադարձ Թուրքիային, և որ «ազգերի ինքնորոշման իրավունքի» բոլշևիկյան պայմանը օգտակար է լինելու ոչ թե հայաթափված Արևմտյան Հայաստանի հայ բնակչության, այլ այնտեղ մնացած թուրքերի և քրդերի համար, որ ցեղասպանության արդյունքում մեծամասնություն են կազմել[42]: Այնուհետև, չունենալով բավարար քանակությամբ ազգային զորամասեր, հայությունը ի վիճակի չէր նաև կազմակերպել և իրականացնել շուրջ 400 հազար արևմտահայ գաղթականների վերադարձի խնդիրը[43]:

ՀԺԿ–ն առանձնահատուկ կերպով կարևորում էր այն հանգամանքը, որ անջատ հաշտությամբ, որին փաստորեն կոմիսարիատի կազմում մասնակցում էին նաև հայերը, հայկական տարրը դեմ էր գնում դաշնակիցների ռազմավարությանը: Թեև դեռ չէր հրապարակվել «Թուրքահայաստանի մասին» բոլշևիկյան հրովարտակը, սակայն միանգամայն պարզ է դառնում, որ ՀԺԿ–ն Հայկական հարցի լուծումը կապում էր միմիայն դաշնակիցների աջակցության հետ, ուստի և այս քայլը հիմնավորապես որակում էր դավաճանություն: Նկատի ունենալով, որ հողագրավումների փոխարեն արևմտահայությանը տրվելու է ինքնորոշման իրավունք, «Զինադադարը» հոդվածում Հ. Առաքելյանը համոզված էր, որ «Թուրքիան միշտ հնարաւորութիւն կը գտնի խուսափելու դրա իրագործումից»[44]: Կուսակցությունն իրավացի էր նաև այն հարցում, որ Կոմիսարիատի կազմում անջատ հաշտությանը հավանություն տվող երեք հայազգի անդամները, որոնք դաշնակիցների աչքում ընկալվում են որպես հայ և ոչ կուսակցական, լիազորված չէին հայ ժողովրդի կողմից, երեք կոմիսարները (2 դաշնակցական և մեկ ս.–դ.) չէին արտահայտում հայ ժողովրդի շահերը: Հ. Առաքելյանը նորից հիշեցնում էր ՀԺԿ–ի առաջարկած «35–ի ժողովի», այսինքն՝ Ազգային ժողովի հրավիրման անհրաժեշտությունը[45]: «Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Բելգիայի, Ամերիկայի աչքում մենք՝ հայերս, նկատվում ենք նույնպիսի դաւաճաններ, որպիսին նրանք այսուհետև համարելու են ռուսներին, որոնք միջազգային դաշնագիրը ճգեցին «աղբի զամբիւղը»,– գրում էր Հ. Առաքելյանը»[46]:

Հեռատես և վերլուծական այս եզրահանգումներում, որոնց մեծ մասը, ցավոք, իրականություն դարձավ, բյուրեղանում և վեր է հառնում ողջ հետհոկտեմբերյան քաղաքական զարգացումների, այժմ էլ՝ հաշտության հիմնահարցի շուրջ ձևավորվող գլխավոր հակասությունը: Դա այն էր, որ Անդրկովկասյան կոմիսարիատի՝ որպես իրեն երկրամասային միացյալ կառավարություն հռչակած մարմնի քաղաքականությունը չէր կարող բխել այն ներկայացնող չորս ազգի շահերից: Այժմ միանգամայն ակնհայտ էր դառնում, որ վրաց–թաթարական ամրապնդվող դաշինքը բացահայտ պայքար էր հայտարարում ռուս–հայկական շարունակվող համագործակցությանը, Կոմիսարիատի գերակշռող և ազդեցիկ վրաց–թաթարական մեծամասնությունը, Թուրքիայի հետ մերձենալով, անկախ կուսակցական պատկանելությունից, հակառուսական պայքարի սկիզբ էր հռչակում, մինչդեռ

դաշնակցական կոմիսարներին իրենց գործընկերների հետ կապում էր առավելապես մերկապարանոց հակաբոլշևիզմը և ոչ ավելին: Կոմիսարիատի հոչակած՝ առաջին հայացքից նույն հակաբոլշևիզմը միևնույն ձևով ու բովանդակությամբ չէր ծառայելու վրացիներին, հայերին, մահմեդականներին: Այս ճրբությունն էին որսացել երկուստեք՝ թուրքական ռազմաքաղաքական գործիչներն ու Կոմիսարիատում տոն տվող վրացական մենշևիզմը: Բացահայտ էր, որ վրացիներն ու թաթարները Թուրքիայի միջոցով փորձել էին լուծել տարածքային և ազգային ինքնիշխանության խնդիրներ և այդ ասպարեզում, ի տարբերություն հայերի, կորցնելու մեծ բան չունեին, «մի հարվածով Բեռլինի դաշնագիր չէին ոչնչացնում», Արևմտյան Հայաստան չէին կորցնում, հակառակը՝ հայության հաշվին և Թուրքիայի հետ նոր ձեռքբերումներ էին ակնկալում:

Այս իմաստով, ՀԺԿ գլխավոր եզրահանգումն ուղղվում էր ի դեմս Կոմիսարիատի հայ անդամների, մասնավորապես, Դաշնակցության դեմ: [47]Հ. Առաքելյանը գիտակցում էր, իհարկե, որ երբ Խորհրդային կառավարությունը և ռուսական հրամանատարությունը կամենում են անջատ հաշտություն կնքել, «հայերը ոչինչ անել չէին կարող, և ոչ ոք հայության կարծիքը կամ հավանությունը չէր հարցնում»: «Բայց թող սեպարատ հաշտութիւն կնքեն առանց մեզ,– գրում էր հեղինակը,– մեր մասնակցութիւնը այդտեղ չը պէտք է լինի»[48]: Հ. Առաքելյանն իր կուսակցության տեսանկյունից ընթերցողին էր ներկայացնում պատերազմի փուլում ՀՀԴ որդեգրած քաղաքականության և այժմ տարվող միանգամայն հակադիր վարքագծի հակասությունը: «Չունենալով երաշխիքներ և ապահովութիւն,– Դաշնակցությանը կշտամբում էր Հ. Առաքելյանը,– Կոմիսարիատի դաշնակցական հայ անդամները չը պետք է ստորագրէին: Նրանք արդէն մի անգամ խաբվեցին Վօրօնցով–Դաշկովից, երբ առանց ունենալու դրական երաշխիք՝ հավատացին նրա խոստումներին, թե Հայաստանին կը տրվի ինքնավարութիւն, և կազմելով կամաւորական խմբեր՝ ենթարկեցին Թուրքիայի հայութիւնը պատմութեան մէջ անօրինակ աղէտների, գոնէ այս անգամ պէտք է խրատվէին և յախուռն քայլ չանէին: Երբ Ռուսաստանը այնպիսի դրութեան մէջ է գտնվում, որ անկարող է այլևս օգնել մեզ, գոնէ մենք չը պէտք է թշնամացնէինք Անգլիան, Ֆրանսիան մեզ հետ, որոնք դեռ ապագայում շատ պէտք կարող են գալ մեզ»[49]:

Նա պահանջում էր նաև, որ եթե կոմիսարիատի անդամների ստորագրությունը անհատական բնույթ է կրում, ապա այդ մասին ՀՀԴ–ն պետք է հանդես գար հայտարարությամբ[50]: Ի պաշտպանություն ասվածի՝ ՀԺԿ ղեկավարներից մեկը՝ Հ. Առաքելյանը, վկայակոչում էր օրերս բացված Հայկական Զինվորական միության համագումարի ընդունած գլխավոր որոշումը, ըստ որի՝ կոմիսարիատից պահանջում էին, որպեսզի հաշտության պայմաններից մեկը լինի Արևմտյան Հայաստանի լիակատար ինքնորոշումը, թուրքական լծից նրա լիակատար ազատագրումը[51]:

«Զինադադարը եւ մեր երկիւղը» հոդվածում այդ գլխավոր տագնապով էր մտահոգված նաև «Վան–Տոսպ»–ը: «Վերջապէս կատարուեց այն, որից մենք սարսափում էինք,– գրում էր շաբաթաթերթը,– մեր քննութեան նիւթը այն է, թե ինչպէս պիտի անդրադառնայ Ռուսաստանի անջատ հաշտութեան փաստը մեր հայրենիքի՝ Հայաստանի ճակատագրի վրայ... թիւրքական մի փաշայի առաջարկին հաւանութիւն էր տրւում, եւ որի տակ ստորագրել էին նաև կոմիսարիատի դաշնակցական անդամները: Անհասկանալի է մեզ Դաշնակցութեան ներկայացուցիչների ստորագրութիւնը յիշեալ թուղթի վրայ»[52]:

Զինադադարի բանակցությունները սկսվեցին 1917 թ. դեկտեմբերի 2–ին (15) Երզնկայում: Ձևավորվում է զինադադարի պայմանների մշակման հանձնաժողով, որը ռուսական բանակի կողմից նախագահում էր Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետ, գեներալ–մայոր Ե. Վիշինսկին: Վերջինիս նախապես տրամադրվում են գլխավոր հրամանատար, գեներալ–մայոր Ե. Լեբեդինսկու և Անդրկովկասյան կոմիսարիատի հավանությանն արժանացած համապատասխան հրահանգները, որոնք էլ կազմում են զինադադարի պայմանագրի հիմքը: Տասներեք կետերից բաղկացած ցուցումներում՝ զուտ

ռազմական և ռազմավարական նախապայմանների շարքում, մեզ հետաքրքրեց 4–րդ կետը. այնտեղ նշվում էր, որ պատերազմի իրավունքով զբաղեցրած տարածքում պետք է պահպանվեին ռուսական քաղաքացիական վարչակարգը ներկայացնող անձանց իրավունքները, այնպես, ինչպես դա իրականացվում էր մինչև զինադադարի ստորագրումը[53]: Դա նշանակում էր, որ առայժմ, ինչպես համառուսաստանյան, այնպես էլ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարությունը, գնալով Թուրքիայի և Գերմանիայի հետ զինադադարի քայլին, լիահույս էին, որ ռուսական բանակի կողմից գրավված տարածքները, այդ թվում և Արևմտյան Հայաստանը կմնան Ռուսաստանի կազմում:

1917 թ. նոյեմբերին ևս ՀՀԴ–ն Սահմանադիր ժողովին շարունակում էր ներկայացնել Փետրվարյան հեղափոխությամբ իր որդեգրած սկզբունքը՝ «Դաշնակցութիւնը պահանջում է հաշտութիւն առանց անէքսիայի և կոնտրիբուցիայի»[54]: Բացառություն էր Երևանի ՀՀԴ «Աշխատանք» թերթի վերաբերմունքը: Արամ Մանուկյանի շուրջ համախմբված գործիչները, մեծմասամբ ՀՀԴ անդամներ լինելով, այնուամենայնիվ վերկուսակցական, համազգային դիրքորոշում էին որդեգրել և իրենց հայացքներում ու մարտավարության մեջ կայուն ու հետևողական էին մինչև վերջ:

«Աշխատանքին» զայրացրել էր հատկապես «Возрождение» թերթի մեջ թաքար Ախլինի հոդվածը, որտեղ, մասնավորապես, ասվում էր, թե «շարունակել պատերազմն անկարող ենք, քանի որ այլևս չունինք ո՛չ դրամ, ո՛չ զօրաբանակ, ո՛չ կարգապահութիւն, ո՛չ ոգևորութիւն, ո՛չ ևս պատերազմի նպատակ: Որոշ նպատակ ունին միայն հայերը, որոնք կուզեն խլել Թուրքիայէն անոր Հայաստան կոչուած երկիրը, որու համար հազիւ թէ միւս ազգերը ջերմօրեն պաշտպանեն այդ պահանջը, ինչպէս հայերը, այդ իսկ պատճառով վրացիները չեն երթար թուրքերու դեմ պատերազմելու, քանի որ Թուրքիան անմիջապէս չի սպառնար Վրաստանին. ռուսները իրենք կը հեռանան ռազմաճակատէն, իսկ մուսուլմանները չեն պատերազմեր թուրքերու դեմ՝ իրենց համար խորթ գաղափարի և նպատակի, այսինքն՝ Հայաստանի ազատութեան համար»[55]:

«Աշխատանքը» ընդվզում էր միաժամանակ մի քանի հիմնահարցերի դեմ, որոնք իր ժամանակին արդեն Հայոց պատմության և Ցեղասպանության կեղծարարության հիմքերն էին կառուցում: Խմբագրականի հեղինակին հունից հանել էր Ախլինի խորհուրդը հայերին՝ լինել շրջահայաց, սուր չճոճել թուրքերի դեմ, որովհետև դա աղետավոր հետևանքներ կունենա, ինչպես եղավ հազարավոր հայերի համար, որոնք «այդ նպատակով պատերազմեցան և գտան յաւիտենական գերեզման»[56] :

«Աշխատանքի» համախոհները վճռականապես դեմ էին անջատ հաշտությանը, մասնավորապես, երբ այն կնքվելու էր «հայաստանցիների հաշվին»:

Հասկանալի է, որ «Աշխատանքը» ինչ–որ տեղ խնայում էր Կոմիսարիատի հայ անդամներին, իր կուսակիցներին, որոնք այս հարցում անօգնական և անհասկանալի վիճակում էին հայտնվել, բայց և աջակցություն էին ստանում Ազգային խորհրդի և ՀՀԴ ղեկավար մարմինների կողմից:

Ցավոք, Թիֆլիսից հրահանգներ ստանալու միտումը շարունակվեց մինչև անկախությունների հռչակումը՝ թե՛ Էրզրումի անկման պահին, թե՛ Տրապիզոնի բանակցություններում, թե՛ Կարսի հանձնման ժամանակ և անգամ անկախություն հայտարարելիս: Ցավալի էր նաև այն, որ Դաշնակցություն կուսակցության այս թևը չէր տոն տալիս և ուղղորդում երկրամասի քաղաքական զարգացումներին, պատերազմի և հաշտության կենսական հիմնահարցերի առթիվ լուծումների և որոշումների կայացմանը:

Զինադադարը ստորագրվեց դեկտեմբերի 5–ին (18): Նրա լրիվ անվանումն է «Պայմանագիր զինադադարի մասին՝ ռազմական գործողությունների թուրք–կովկասյան թատերաբեմում գործող ռուսական և թուրքական բանակների միջև՝ դեմարկացիոն գծերի և դրանց սխեմաների հաստատման վերաբերյալ»[57]: Դեկտեմբերի 7–ին (20) գեներալ–մայոր Ե. Վիշինսկին Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարին է ներկայաց-

նում զինադադարի պայմանագրի բնօրինակ փաստաթղթերը, այդ թվում` պայմանագրի ռուսերեն և թուրքերեն տեքստերը, դեմարկացիոն գծերի մասին ակտը և սխեման[58]: Ավելացնենք, որ գեներալ Օդիշելիձեն ցանկալի էր համարում դեմարկացիոն գծերի փոխարեն չեզոք գոտի հաստատել[59]:

Երզնկայի զինադադարի պայմանագիրը բաղկացած էր երկու բաժիններից, որոնցից առաջինը` 14 կետից: Ռուսական Կովկասյան բանակի կողմից այն ստորագրեցին Կովկասյան բանակի շտաբի պետ, գեներալ–մայոր Ե. Վիշինսկին, Ելիզավետպոլյան 158–րդ գնդի հրամանատարը, զինվոր Ալ. Սմիրնովը (ս.–դ.), դաշնակցական Արշ. Ջամալյանը և պրիվատ–դոցենտ Վ. Թևզայանը (ս.–դ.), թուրքական բանակի կողմից` 3–րդ բանակի շտաբի պետ գնդապետ Օմար Լյուֆթի Բեյը և շտաբի կապի բաժնի պետը: Ներկայացուցչական նման անհամամասնությունը վկայում էր, որ ռուսական կողմը, այդ թվում և Անդրկովկասյան կոմիսարիատը ավելի շահագրգռված էին զինադադարի ստորագրմամբ, մի հանգամանք, որն օբյեկտիվորեն բխում էր և թելադրվում խորհրդային կառավարության կողմից:

Երզնկայի զինադադարի կնքման գործընթացի ժամանակ արդեն պարզ էր, որ վրաց–թաթարական դաշինքը ամեն գնով Թուրքիային է նվիրելու Արևմտյան Հայաստանը, ինչը հիմնավորվում է նաև Կովկասյան բանակի հանդեպ ցուցաբերած հետևողական, թշնամական դիրքորոշմամբ: Մեզ համար առավելապես կարևորվում է այն միտումը, որ, ի դեմս կոմիսարիատի հայ անդամների, նախ դրսևորվում էր բացահայտ հակահայկական քաղաքականություն և, որ ավելի կարևոր է, այդ քաղաքականության դեմ ոչ մի գործնական քայլ չէր ձեռնարկվում, դասեր չէին քաղվում, և շարունակվում էր նույն պարտվողական մարտավարությունը, այն էլ ներքին քաղաքական անհաշտ հակասությունների պայմաններում:

Չգիտես ինչու, հայ ս.–դ. մենշևիկների գաղափարախոս–առաջնորդներից Գևորգ Ղարաջյանը (Արկոմեդ) համոզված էր, որ Թուրքիայի յուրաքանչյուր ռազմավարական քայլը, որը թելադրվում էր Գերմանիայի կողմից, չհասկացվեց «վրացական սոցիալ–դեմոկրատ, կարճատես, գերմանոֆիլ, չխենկելիատիպ գործիչների»[62] կողմից: Իրականում ամեն ինչ այլ կերպ էր ընթանում. հայ մենշևիկները չէին հասկացել և յուրացրել այն, ինչը վաղուց իր քաղաքական սպառազինության օրակարգն էր ընդգրկել վրացական մենշևիզմը, որն առաջնորդվում էր ոչ թե սոցիալ–դեմոկրատիայի, այլ զուտ վրաց ազգի կենսական հրատապ շահերով:

Երզնկայի զինադադարը մեծ հիմնահարցի նախերգանքն էր միայն: Դրան անմիջապես հետևում է Թուրքիայի և Անդրկովկասյան կոմիսարիատի ու ռազմաճակատի հրամանատարության միջև բանակցությունների գործընթացը: 1918 թ. հունվարի առաջին կեսին երկուստեք շարունակվող հաղորդագրություններն ու քննարկումները վկայում են, որ պատերազմում հակառակորդներ, իսկ այժմ` Կոմիսարիատի անկախության հռչակումից ու դրանով իսկ Խորհրդային Ռուսաստանը չճանաչող երկրամասի իշխանությունների և հարևան Թուրքիայի միջև սկսվում են բոլորովին նոր որակի հարաբերություններ:

1918 թ. հունվարի 1–ին (13) Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերի հրամանատար Ֆերիկ–Վեհիբ–Մեհմեդ փաշայի կողմից Կովկասյան բանակի նորանշանակ հրամանատար, գեներալ–լեյտենանտ Օդիշելիձեին[60] հասցեագրված նամակում առաջին անգամ թուրքական հրամանատարությունը բարձրացնում է Անդրկովկասի քաղաքական կարգավիճակի ճշգրտման խնդիրը[61]: Միջնորդավորված հարցումներով, գեներալ Վեհիբ Մեհմեդը գլխավոր հրամանատարի պաշտոնակատար Էնվեր փաշայի համար նրբորեն փորձում էր պարզել, թե ինչ է նշանակում Երզնկայի զինադադարի ստորագրման ժամանակ կիրառված «Անդրկովկասյան անկախ կառավարություն» հասկացությունը, քանի որ, ի դեմս գեներալ Ե. Վիշինսկու, Կովկասյան բանակի հրամանատարությունն այդ կառավարության անունից էր սկսել բանակցությունների գործընթացը, և ինչ ճանապարհով է նրա-

րավոր վերականգնել հարաբերությունները այդ կառավարության հետ: Էնվեր փաշայի առաջարկով «Կովկասյան անկախ կառավարության» մայրաքաղաք՝ Թիֆլիս է գործուղվում պատգամավորական հանձնաժողով՝ երկու կողմերի միջև խաղաղ հարաբերություններ հաստատելու և այդ ուղղությամբ առաջարկներ մշակելու նպատակով[62]:

1918 թ. հունվարի 5–ին (18) բոլշևիկները Պետրոգրադում ցրեցին Սահմանադիր ժողովը՝ իրականացնելով կրկնակի հեղաշրջում և բացահայտելով կուսակցության ու Ժողկոմխորհի իրական ռազմավարությունը:

Նույն օրը Անդրկովկասյան կոմիսարիատի նիստը քննեց այդ բեկումնային իրադարձության հարցը: Դ. Դոնսկոյը բոլշևիկների քայլը հիմնավորում էր նրանով, որ «նրանց ամեն գնով անհրաժեշտ էր հաշտություն, որը ձեռնտու է գերմանական իմպերիալիզմին»[63]: Եթե անգամ Դ. Դոնսկոյի՝ որպես զինվորական գործչի եզրահանգումը կիսատ էր հնչում, միևնույնն է, նրա դիտարկումը տեղին է, քանի որ քաղաքական տեսանկյունից բոլշևիկների գործարքը գերմանացիների հետ լիովին արդարացվում էր իշխանությունն ամեն գնով պահելու համատեքստում:

Քննարկումների արդյունքում արվեց սպասվող հետևությունը՝ երկրամասն ամրապնդելու նպատակով անհրաժեշտ է հրավիրել տեղական Սեյմ՝ բաղկացած Սահմանադիր ժողովի անդամներից[64]: Ի հայտ եկան երկու մոտեցումներ. մի մասը գտնում էր, որ ծայրագավառներն ամրապնդելով միայն կարելի է թուլացնել, մեկուսացնել բոլշևիկներին և հրավիրել Սահմանադիր ժողովը, իսկ մյուսները նշում էին այն հանգամանքը, որ մինչև ազգային ծայրագավառները կամրանան, բոլշևիկները իրենց ոճով հաշվեհարդար կտեսնեն թե՛ կենտրոնի, թե՛ շրջանների հետ, իսկ տեղական սեյմերի հրավիրումը կնպաստի նրան, որ Սահմանադիր ժողովը երբեք չի հրավիրվի[65]: Երկրորդ մոտեցումն անվիճելիորեն ճիշտ էր և ելնում էր նախ և առաջ բոլշևիզմի դեմ միասնական պայքարի ելակետից, ինչը լիովին անտեսվում էր վրացական մենշևիկների կողմից:

1918 թ. հունվարի 12–ին (25) բ. գ. գ. պ. երկրամասային կենտրոնը Սահմանադիր ժողովը ցրելու վերաբերյալ ընդունեց որոշում, որտեղ մասնավորապես ասվում էր. «Սահմանադիր ժողովի ցրումը կտրեց այն վերջին թելը, որը կարող էր միավորել ամբողջ Ռուսաստանը և համառուսաստանյան հեղափոխական դեմոկրատիան: Սահմանադիր ժողովի համար պայքարը պայքար է Ռուսաստանի միասնության և հեղափոխության հաղթանակի համար: Սահմանադիր ժողովի ցրումը Անդրկովկասը կրկին տրամադրեց իր սեփական ուժերին: Երկրամասի կենսական շահերը պահանջում են մոտակայում հրավիրել Անդրկովկասից Սահմանադիր ժողովի համար ընտրված պատգամավորների ժողով, որն էլ կստեղծի ուժեղ և հեղինակավոր իշխանություն»[66]:

Անդրկովկասի անկախացման ճանապարհին Երզնկայի զինադադարը դարձավ առաջին գլխավոր ջրբաժանը, երբ Կոմիսարիատն իր որդեգրած անկախացման և, այդպիսով, նաև Թուրքիայի հետ մերձենալու նախաշեմին իրեն ավելի բաց դրսևորեց, սկսեց գործել առավել համարձակ: Պաշտոնական փաստաթղթերի մեջ միանգամից մուտք գործեց «Կովկասի անկախ կառավարություն» ձևակերպումը, որը նախ շեշտում էր Ռուսաստանից վերջնականապես հեռանալու առաջնահերթ հարցադրումը, ապա և Անդրկովկասը Կովկաս կոչելով՝ հետապնդվում էր պանթուրքիզմի դեռևս չիրականացված ծրագիրը՝ հակառուսական դաշինքի մեջ ներառելով նաև Հյուսիսային Կովկասի մահմեդականներին: Միայն Վեհիբ փաշայի նամակում այդ նոր ձևակերպումը կրկնվում էր հինգ անգամ: Ժամանակին դա նկատել էր նաև Ալ. Խատիսյանը, նա գրում էր. «Տաճիկների համար անկախ Կուկաս մը բաղձալի պատնէշ մըն էր Թուրքիոյ և Ռուսիոյ միջև: Թիֆլիսի մէջ այդ բանը զգացին, բայց դեռ ոչ ոք չէր ուզէր բացահայտօրէն խոսել Ռուսիայէն անջատելու մասին: Համենայն դեպս, ուշադրութեան արժանի է, որ անկախութեան գաղափարը և այդ գաղափարի հրահրումը եկավ Թուրքիայէն»[67]: Ալ. Խատիսյանի եզրահանգումը մեկ անգամ ևս հիմնավորում է Կոմիսարիատի կազմում հայազգի կոմիսարների կայացրած

լուռ համաձայնությունը՝ Ռուսաստանից անջատվելու և Թուրքիայի հետ մերձենալու վերաբերյալ: Մեր կողմից բերված փաստարկները, սակայն, հիմնավորում են այն մոտեցումը, *որ վերոհիշյալ գործընթացը սկսվել է ոչ թե Թուրքիայի, այլ վրացական մենշևիզմի նախաձեռնությամբ՝ բոլշևիկյան հեղաշրջման արդյունքում:*

Թուրքական առաջարկին զուգահեռ, Սահմանադիր ժողովի ցրումն արագացրեց միայն և վճռականություն հաղորդեց ռազմաքաղաքական նոր դաշնակցի ընտրության գործընթացին, ինչը վրացական մենշևիզմի համար սպասված, անգամ փորձարկված գաղափար էր (նկատի ունենք վրաց–թուրքական 1914 թ. գաղտնի համաձայնագիրը, որը պատերազմի նախօրեին ուղղվում էր Ռուսաստանի դեմ – Վ.Մ.):

Միաժամանակ, Բրեստ–Լիտովսկի բանակցությունների ուղղվածության համատեքստում Թուրքիան ուժեղացնում էր ճնշումը Անդրկովկասյան կոմիսարիատի վրա՝ նրանց պահանջելով կնքել հաշտության անջատ պայմանագիր:

Այսպիսով՝ Անդրկովկասյան կոմիսարիատը, երկրամասային կենտրոնի և Կովկասյան բանակի հրամանատարության հետ համատեղ, հավանություն տալով Էնվեր և Վեհիբ փաշաների կողմից բարձրացված հաշտության առաջարկին, եզրափակեց հետհոկտեմբերյան վայրիվերումների փուլը, Թուրքիայի հետ մերձենալով՝ գործով ապացուցեց, որ երկրամասը Ռուսաստանի մաս չէ այլևս, իսկ Սահմանադիր ժողովի ցրումից հետո նրանք օբյեկտիվորեն վերածվեցին դաշնակիցների:

«Ռուսներին չեն սիրում վրացիք, թուրքերը, դաղստանցիք, լեհերը,– 1917 թ. գրում էր Ավ. Իսահակյանը,– միայն մենք, և դա մեր թշվառության պատճառը եղավ, մեր դժբախտության պատճառը: Մեր սիրո համար սկսեցին մեզ ատել և վնասել ռուսատյացները, մեր քաղաքականությունը հակառակ եղավ նրանց քաղաքականությանը»[68]:

Ժամանակի օրհասական վտանգի տագնապն ենք կարդում Բաքվից Զապել Եսայանի կողմից դեկտեմբերի 8–ին Արշակ Չոպանյանին ուղղված նամակում. «Թերեւս մինչև իմ նամակի տեղ հասնելը, դաշնակիցները պաշտոնապէս խզած ըլլան Ռուսիայի հետ, և մենք անգամ մը ևս գտնվինք թշնամի երկրի մէջ: Հաղորդակցութիւնը Կովկասի և Ռուսաստանի հետ խզված է արդեն: Կովկասը մինչև այժմ աւելի հանդարտ է և ապահով, մեկ օրէն միւսը ամեն ինչ կարող է փոխուել. ուղղակի հրաբուխի վրա ենք. այսպիսի դրութեան մէջ մեր հայ ժողովրդի, մասնավորապես, թրքահայ ժողովրդի վիճակը այնքան ճգնաժամային է, որ մարդ կկորսնցնէ իր անհատական անապահուութեան զգացումը: Թերեւս այդ է պատճառը, որ ես շատ պաղարյուն եմ և հակառակ մեր հավաքական անել դրութեան՝ հույսս չեմ կորսնցուցած, որ որեւէ անսպասելի բանով մը պիտի փրկվենք»[69]:

Ռազմաքաղաքական սրընթաց գործընթացների զավեշտը և հակասությունն այն են, որ Թուրքիայի հետ մերձեցումն ընթանում էր Գերմանիայի հետ Ժողկոմխորհի սկսած անջատ բանակցությունների համատեքստում: Փաստորեն, Անդրկովկասյան կոմիսարիատը, երկրամասում և Կովկասյան ռազմաճակատում որդեգրելով բոլշևիկյան կառավարության ռազմավարությունը, ևս մի անջատ դաշինքի էր գնում այդ նույն Գերմանիայի դաշնակից Թուրքիայի հետ, բայց ոչ թե Գերմանիայի նման բոլշևիկներին երաշխիքներ տալու, այլ վերջինիս իշխանությունը չճանաչելու ճանապարհով:

1. Տե՛ս Центральный Государственный Исторический Архив Грузии (ЦГИА). Ф. 1, оп. 2, д. 12, л. 55:
2. Տե՛ս նույն տեղում:
3. Տե՛ս նույն տեղում:
4. Տե՛ս նույն տեղում:
5. Տե՛ս նույն տեղում:

6. Տե՛ս Հորիզոն, Թիֆլիս, 1918, 3 հունվարի, թիվ 1:
7. Деникин А. И. Очерки русской смуты. М., 1991. С. 96.
8. Там же. С. 96.
9. Տե՛ս Беленький С., Манвелов А. Революция 1917 г. в Азербайджане (хроника событий). Баку, 1927. С. 175–176:
10. Տե՛ս ЦГИА Грузии. Ф. 1, оп. 2, д. 116, л. 28:
11. Վ. Խաղլամովը կազակ սպայի ընտանիքից էր, նոյեմբերի սկզբից Դոնի բանակային կառավարության կողմից ստեղծված տնտեսական խորհրդի նախագահն էր, 1918 թվից՝ Դոնի Շրջանի նախագահ: Իր գործունեության մեջ կողմնորոշվում էր դեպի Ա. Դենիկինը:
12. Տե՛ս ЦГИА Грузии, նույն տեղում, թ. 53:
13. Տե՛ս Политические деятели России, 1917. Биографический словарь. М., 1993. С. 333.
14. ЦГИА Грузии. Ф. 1, оп. 2, д. 116, л. 53
15. Տե՛ս նույն տեղում:
16. Տե՛ս նույն տեղում:
17. Տե՛ս նույն տեղում, թ. 59:
18. Տե՛ս նույն տեղում:
19. Деникин А. И, Նշվ. աշխ, էջ 86:
20. ЦГИА Грузии. Ф. 1, оп. 2, д. 116, л. 59.
21. Տե՛ս Республика. Тифлис, 1917, 2 ноября, N 96:
22. Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 30, II մաս, թթ.154–158:
23. ЦГИА Грузии. Ф. 1, оп. 2, д. 12 л. 30.
24. Տե՛ս նույն տեղում:
25. Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлис, 1919. С. 12–13.
26. Տե՛ս նույն տեղում, էջ 14:
27. Տե՛ս Республика, 1917, 23 ноября, N 113:
28. Տե՛ս Аркомед С.Т. Материалы по истории отпадения Закавказья от России. Тифлис, 1923. С. 13.
29. ЦГИА Грузии. Ф. 1, оп. 2, д. 12, л. 30.
30. Տե՛ս նույն տեղում:
31. Տե՛ս նույն տեղում, էջ 13:
32. Տե՛ս նույն տեղում, էջ 14:
33. ЦГИА Грузии. Ф. 1, оп. 2, д. 12, л. 31.
34. Народная свобода. Тифлис 1917, 23 ноября.
35. Տե՛ս Հայաստան, Թիֆլիս, 1917, 12 դեկտեմբերի, թիվ 173:
36. Նույն տեղում, 1918, 1 հունվարի, թիվ 1:
37. Հայրենիք, Բոստոն, 1923, թիվ 3, էջ 124:
38. Տե՛ս Զանգ, Երևան, 1917, 26 նոյեմբերի, թիվ 6:
39. Տե՛ս նույն տեղում:
40. Տե՛ս Զանգ, 1917, 26 նոյեմբերի, թիվ 6:
41. Հորիզոն, 1917, 12 դեկտեմբերի, թիվ 260:
42. Տե՛ս Մշակ, Թիֆլիս, 1917, 25, 26 նոյեմբերի, թիվ 252, 253:
43. Տե՛ս նույն տեղում, 1917, 2 դեկտեմբերի, թիվ 257:
44. Տե՛ս նույն տեղում, 25 նոյեմբերի, թիվ 252:
45. Տե՛ս նույն տեղում, 2 դեկտեմբերի, թիվ 257:
46. Տե՛ս նույն տեղում:
47. Տե՛ս Մշակ, Թիֆլիս, 1917, 26 նոյեմբերի, թիվ 253:
48. Նույն տեղում:
49. Նույն տեղում:
50. Տե՛ս նույն տեղում:
51. Վան–Տոսպ, Թիֆլիս, 1917, 3 դեկտեմբերի, թիվ 43:
52. Տե՛ս Документы и материалы. С. 16–18:
53. Հորիզոն 1917, 12 նոյեմբերի, թիվ 242:

54. Աշխատանք, Երևան, 1918, 3 փետրվարի, թիվ 75:
55. Նույն տեղում:
56. Տե՛ս ЦГИА Грузии. Ф. 1876, оп. 1, д. 1, л. 1.
57. Տե՛ս նույն տեղում:
58. Տե՛ս Российский Государственный Военно—Исторический Архив. Ф. 2100, оп. 1, д. 32, л. 5:
59. Տե՛ս Аркомед С.Т. Նշվ. աշխ., էջ 13:
60. 1918 թ. հունվարի 15–ին (28) նիստում Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար է հիշատակվում Ե. Լեբեդինսկին:
61. Տե՛ս ЦГИА Грузии. Ф. 1, оп. 2, д. 12, л. 3.
62. Տե՛ս Документы и материалы. С. 24—25:
63. ЦГИА Грузии. Ф. 1818, оп. 2, д. 141, л. 11
64. Տե՛ս նույն տեղում:
65. Տե՛ս նույն տեղում:
66. Տե՛ս Документы и материалы. С. 27—28:
67. *Խաթիսեան Ա.*, Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 30:
68. *Իսահակյան Ավ.*, Հայկական հարց, Երևան, 2005, էջ 76:
69. Տե՛ս Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), 1–ին բաժին, Ար. Չոպանյանի ֆ., թղթ. 1777:

ВОЕННО–ПОЛИТИЧЕСКАЯ И ДИПЛОМАТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ ЗАКАВКАЗСКОГО КОМИССАРИАТА И ПОЗИЦИЯ АРМЯНСКИХ ВЛИЯТЕЛЬНЫХ ПАРТИЙ

Меликян В. Г.

(Резюме)

После большевистского переворота, отдельной областью деятельности закавказского правительства – Комиссариата, является военно–политическая и дипломатическая сфера.

Первоначально, Комиссариат по внешним сношениям Закавказского правительства был сконцентрирован на двух приоритетных направлениях: по отношению к Ирану и к антисоветским государственным образованиям. Формирующиеся отношения с ними преследовали главную цель – с их поддержкой укрепить антибольшевистский лагерь в крае, укрепить власть Комиссариата. С ноября 1917 г. Комиссариат вовлекся в арену переговоров с Юго–Восточным союзом (Казачьи войска Дона, Кубани, Терека, Астрахани, Оренбурга, Урала, объединенные правительства Дона, Кубани, Терека, Горцев Северного Кавказа).

После Октябрьского переворота, общественно–политическая жизнь Закавказья сосредоточилась вокруг Кавказского фронта.

Начинался сложный, насыщенный событиями процесс, который охватывал период от перемирия в Ерзынка до Батумского договора. Фактически, Закавказский Комиссариат вместе с командованием Кавказского фронта, осуществлял инициативу большевиков – заключение перемирия и сепаратного мира с Германским блоком.

На пути к отделению Закавказья от России, перемирие в Ерзынка стало главным водоразделом, когда Комиссариат в преддверии сближения с Турцией, стал действовать более открыто.

Таким образом, Закавказский Комиссариат пошел дальше и заключил еще один сепаратный мир с союзницей Германии – Турцией, но не путем гарантий, данных Германией большевикам, а, наоборот, путем непризнания власти большевиков в России.

Армянские влиятельные партии и течения сразу же выразили свою неоднозначную позицию с предложением перемирия и мира. С оппозиционным настроем выступила и Армянская Народная партия (партия кадетского полка). Она полностью идентифицировала тактику большевистского правительства и Комиссариата по отношению к сепаратному миру. В этом смысле, главный удар партии был направлен против партии Дашнакцутюн, которая оказалась в противоречивой ситуации: с одной стороны она всячески стремилась сохранить фронт с целью защиты Западной Армении, с другой – фактически осуществляла политику Комиссариата.

ФОРМЫ ПРОЯВЛЕНИЯ СОЦИАЛЬНО–ЭКОНОМИЧЕСКИХ КОНФЛИКТОВ В АРМЕНИИ (XIX – XX вв.)

Аствацатуров С. В., Баблоян А. Г.

Исследование проблемы возникновения, проявления, функционирования и урегулирования исторических форм социально-экономических конфликтов в Армении, предполагая использование возможностей социологического изучения (в том числе историко-сравнительного метода), а также интерпретацию результатов анализа полученных социологических данных, нуждается, на наш взгляд, в уточнении методологической специфики подобного исследования. В основе такой специфики лежит допущение о возможности объединения нижеследующих обстоятельств: во-первых, речь идет о влиянии национального фактора на явления, события и процессы социально–исторического прошлого армянского народа; во-вторых, суть подхода состоит в особом ключе к анализу социально-экономических конфликтов. Рассмотрим каждый из этих пунктов в отдельности.

Несмотря на то, что задачи исследования социально-экономических конфликтов и форм их проявления в Армении не затрагивают напрямую проблематику этнической самобытности, становления, самосохранения и национального единства армянского народа, тем не менее их анализ, на наш взгляд, следует осуществить с учетом детерминированности тех или иных историко–социальных событий национальным фактором и, в частности, такой переменой, как наличие или отсутствие государственности и политической самостоятельности. В этом смысле особенно интересен подход некоторых армянских теоретиков, и прежде всего проф. К.Мирумяна, отмечающих ограниченность возможностей социологического метода в деле анализа исторического прошлого государств и народов, которые на протяжении многих веков были лишены политической самостоятельности, в результате чего исторические события и процессы предопределялись скорее национально-историческим фактором, нежели общественно–историческим[1]. Поэтому при историко-сравнительном анализе необходимо различать периоды наличия и отсутствия государственности в Армении, так как национальный фактор в некотором смысле может изменить содержание и формы проявления экономико-конфликтных процессов.

Второй аспект, будучи дополнением к первому, касается разработанных нами методологических основ исследования форм проявления социально-экономических конфликтов, которым соответствует их рассмотрение не только как атрибута и проявления экономических отношений, но и как системы, в рамках которой последние приобретают различные формы проявлений, как в экономической, так и политической, социально-трудовой, организационно-административной, социо-культурной, этнической и прочих сферах жизнедеятельности общества на различных (микро–, мезо–, макро–) уров-

